

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏԵ

15 ՕԳՈՍՏՈՍ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

7 ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ՓՈՂՈՅ 7

ԻՒՒԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՄԱՅՐ ԻՒՒԱՆ

Սերվիլէն էֆէնտի	Ա. Արեւապետ
Յ. Մէրեւեմ-Գուլի էֆէնտի	Բ. »
Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան	Գ. »
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան	Ա. Արեւապետ
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան	Բ. »
Միհրան էֆէնտի Չօպանեան	Գ. »

Ձեռնասուքեան դիւան

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան
Հովհաննէս Քահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօեան

Դաստիակութեան դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւլեան
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Տօքթոս Ռափիաէլեան էֆէնտի

Կարուածոց դիւան

Աւետիս էֆէնտի Կիրտաղեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Քրիստոսաուր էֆ. Ղազարոսեան

Համարակալութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արշակ
Պօղոս էֆէնտի Թորգոմեան
Յովհաննէս էֆէնտի Պօյաճեան

Յարաբերութեան դիւան

Գարեգին էֆէնտի Մելիքեան
Միհրան էֆէնտի Չօպանեան
Նշան էֆէնտի Օտեան

Իրաւասութեան դիւան

Տ. Ներսէս վարդապետ Ասլանեան
Տելեմար էֆէնտի Էքսէրճեան
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

Նախամեռնութեան դիւան

Տիգրան էֆէնտի Եռասուֆեան
Ղազար էֆէնտի Հովուեան
Աւետիս էֆէնտի Քօլօլեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆ. Խթիւճեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան
Աբրահամ էֆէնտի Մուրատեան

ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՔԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ե

15 ՕԳՈՍՏՈՍ 1880

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Կարապետ Եպիսկոպոս Սերոբեան (Առժամեայ կարգեալ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Յ. Մէրեւեմ-Գուլի էֆէնտի (Դեր-Ատենապետ)

ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Ա. Վիճակ	
1 Կարապետ Եպ. Սերոբեան	Բ. Վիճակ
2 Սիմոն Եպ. Սէֆէրեան Բ	5 Մատթէոս Եպ. Իզմիրլեան
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ	6 Պօղոս Վ. Խօյտամեան
4 Կարապետ Բ. Սէթեան	7 Յովհաննէս Բ. Մկրեան
	8 Գրիգոր » Աճէմեան
Գ. Վիճակ	
9 Վահան Վ. Տ. Մինասեան	
10 Յակոբ » Ա. Փափաղեան	
11 Սահակ Բ. Տ. Սարգսեան	
12 Խորէն » Փէշիլիճեան	
Դ. Վիճակ	
13 Ներսէս Վ. Ասլանեան Բ 5	
14 Սուքիաս Բ. Ստեփանեան Բ 3	
15 Վրթանէս » Պալեան Բ 5	
16	
Ե. Վիճակ	
17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ Պ	
18 Յովհաննէս Վ. Փափաղեան	
19 Գարեգին » Թաթարեան	
20	

Բ Բացակայութիւն առաջին
Բ.2 Բացակայութիւն երկրորդ
Բ.Պ Բացակայութիւն պատճառաւ

ՄՈՒՐԱՅԻՆ

(Ա. Վիճակ)	
Գումգարու, Կետիկ վաշա	
Էւ. Գումգարուի դուրս	
21 Գրիգոր Պէրպէրեան Բ 5	
22 Գէորգ Սալմաստեան Բ 5	
23 Խաչիկ Մանկասարեան Բ 5	
24 Կարապետ Աղարդմաճեան Բ	
25 Համբարձում Մաղպուտեան Բ 2	
26 Մինաս Գափաճեան	
27 Յովհաննէս Պօյաճեան Բ 5	
28 Ն. Մէլիքեան Տօքթօր Բ 5	
29 Պօղոս Պանասեան Բ 5	
30 Սարգիս Աղաբէկեան Բ Պ	
31 Սահակ Ապրօ Բ Պ	
32 Աննեքերիմ Մանուկեան Բ 4	
33 Բարթոլ Քիւրքճիպաշեան Բ 4	
34 Ատովմ Տէրոյնց Բ 5	
35 Գէորգ Աստուլաճեան Բ 5	
36 Յ. Մէրեւեմ-Գուլի	
37 Աւետիս Կիրտաղեան Բ 5	
(Բ. Վիճակ)	
Պէշիկբաշ	
38 Անդրանիկ Կրճիկեան Բ	
39 Ալիքսան Խօրատմեան Բ 5	
40 Բարսեղ Հալաճեան Բ 2	
ԵԿԵՐՊԱՐՈՒ	
41 Մկրտիչ Քիւրքճիպաշեան	
42 Սեպուհ Մազառուտեան Բ 5	
43 Մարուգէ Յրէնկեան Բ 2	
44 Պօղոս Էքսէրճեան	
Իսկիւտար Ս. Խաչ	
45 Սիմոն Ֆէլիկեան Բ 3	
46 Ստեփան Ասլանեան Բ Պ	

47 Յ. Նիշմանեան Տօքթօր Բ Պ	
48 Իսկիւտար Ս. Կարապետ	
49 Միհրան Պանճիկապետեան	
50 Պօղոս Թորգոմեան Բ	
51 Նիկողոս Այաճաճեան	
52 Տրդատ Փափաղեան Բ	
(Գ. Վիճակ)	
Գասրմ բաշա	
53 Գասպար Չէրազ Բերա	
54 Աբիկ Ունճեան Բ 3	
55 Գրիգոր Սէլիմիճեան Բ Պ	
56 Գրիգոր Օտեան Բ Պ	
57 Սերվիլէն Բ 5	
58 Ռափայէլեան Տօքթօր Բ 5	
59 Միքայէլ Մամիկոնեան Բ 5	
60 Կարապետ Քաղաղեան Բ 5	
61	
62	
Միջագիւղ	
63 Յակոբ Նորատուկեան Բ 2	
64 Տիգրան Եռասուֆեան	
65 Մկրտիչ Գաղանճեան Բ	
66 Աւետիս Գօլօլեան Բ 5	
67 Նշան Օտեան	
Պէյգօգ Էւ. Ղալափա	
68 Միքայէլ Մամիկոնեան (Գ. Վիճակ)	
Քուրդուսնուգ Էւ. Իճատիէ	
69 Յովհաննէս Կասեան Բ 5	
70 Ստեփան Պէշիկեան Բ 5	



Գատըզիւղ	Գ.Ա.Ա.Ռ.Ա.Կ.Ա.Ն ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահպաղեան Բ		121 Ստեփան ֆափաղեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ 4	Կարին	Տիվրիկ
Նարլըգարու	101 Սիմոն Մաղսուտեան Բ 4	122 Նշան Գարագաշ
73 Յակոբ Եէմէնիճեան Բ 2	Քեօբանեա	Ջէյրուհ Եւ Մարուշ
Եհեմիմանալի Սամարիոյ	102 Մ. Փափաղեան Տօրթօր Բ 5	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 5	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգալիու.	103 Վ.Իչէն Ապտուլլահ Բ 5	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 5
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիա	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Եւ Ս.	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	125 Մեղծոն Իսկէնտէրեան Բ 5
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Ա.Ետիս Պարոնեան Բ 4	126 Միհրան Չօլանեան
Գուրուչէլմէ	Ղարանիսար	Վան
77 Ասափա Իկիտպաշեան	106	127
Հիսար Եւ Պօյաճի գիւղ	Արաբկիր	Աղբամար
78 Յովհաննէս Արշակունի Բ 5	107 Կարապետ Խաչիկեան	128
Նոր գիւղ Եւ Սրեհիա	Բաղէշ	Հայեպ Եւ Այնթապ
79 Ղազար Հովուեան	108	129
Պալատ	Պրուսա	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ 5	109 Բրիտտոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Յովհաննէս Կրճիկեան Բ 2	Եւրոկիա	Թուսճուգ
82 Տելեմաք Էքսէրճեան Բ 2	140	131
Քարակեօմրիկ	Ամասիա	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան Բ	141 Համբարձում Ալաճաճեան	132 Արրահամ Յ. Այվազեան Բ
84	Բալու.	Զմշկածագ
(Եւ Վիճակ)	142 Յովհաննէս Աղնաւորեան Բ 3	133 Համբարձում Սարըքէշիճեան
Սամարիա	Եղեսիա	Գաղատիա
85 Ալիքսան Պէշիբեան	143 Յակոբ Իւթիւճեան	134
86 Եղիազար Մէլիքեան Բ 5	Մանճըլըլիս	Ատանա
87 Մինաս Ճաֆճաֆեան	144	135
88 Նազարէթ Շահպաղեան Բ	Հաճըն	Սղերդ
89 Յարութիւն Թիւլեան Բ	145	136 Մատթէոս Ալէքսանեան Բ 5
90 Յակոբ Արշակ Բ 2	Երզնկա	Եօզրատ
91 Սեպուհ Թիւլիւղեան Բ 3	146 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան
92	Թեքիրտաղ	Մալաթիա
93	147 Տիգրան Գ. Սինանեան Բ 4	138 Գէորգ Վարդանեան
94	Կեսարիա	Իզմիր
Խասգիւղ	148 Գէորգ Գըլլճճեան	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրրի Բ 2	Խարբերդ	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէշիկճեան Բ 2	149	140 Արրահամ Մուրատեան
97 Սարգիս Արրահամեան Բ 5	Պալքքեսեր	
98 Մ. Արծրունի Տօրթօր Բ 5		
99 Սարգիս Քալուքճեան Բ 5		
100 Աթանազիոն Արապեան Բ 5	120	

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Մրադիր վարչական կազմակերպութեան .
 Բ. Խնդիր ժողովարանի տեղափոխութեան և բացակայութեան երեսփոխանաց . — Տեղեկագիր Յանձնախմբին .

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն անձնական տկարութեան պատճառաւ ստիպուած լինելով բացակայ մնալ ժողովէն, ընդ առժամեայ նախադահութեամբ՝ Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոսի Սերովբեան՝ երիցագունին Եպիսկոպոսաց, եւ Ատենապետութեամբ Յ. Մէրեմի-Գուլի էֆէնտիի՝ ատենանը բացուեցաւ ժամ 7 1/2ին 'ի ներկայութեան 33 երեսփոխանաց, որոց թիւն 33 ի յանգեցաւ 'ի վերջէ :

Նագրութիւնն տպագրուած եւ ցրուած է արդէն երեսփոխանաց, որ անշուշտ ժամանակ ունեցած են կարգալու զայն : Ուստի նոյն ատենագրութիւնը կը ներկայեմ ժողովիդ վաւերացման, եւ եթէ զիտողութիւն ունեցող կայ, կը հրաւիրեմ խօսք առնուլ :

Որ եւ է զիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Գ. Նիստի ատենագրութիւնն, եւ ժողովը միաձայն ընդունելով զայն անփոփոխ՝ կը Վ.Ա. Իեթի :

1 .

2 .

Վաւերացումն Գ. Նիստի սատենագրութեան

Ատենական գործողութեանց վերաբերեալ գրէր .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — ժողովիս նախընթաց Գ. Նստի ատենագրութիւնն տակաւին չէ կըրցած պատրաստուիլ, սակայն Գ. Նիստի ատե-

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — ժողովիս սեղանին վերայ ատենական գործողութեանց կարօտ բա-

նի մը գրեր կան, զորս երկու նիստէ 'ի վեր չկրցի ժողովիդ ներկայել, վասն զի Գ. նիստին առաջին անգամ ժողովիդ ներկայ գտնուելով եւ իւր գեր-Ատենայետ հրաւիրուելով ատենանը վարելու՝ բնապէս չէի կրնար ծանօթութիւն ունենալ այդ գրերուն պարունակութեան նկատմամբ, եւ զանոնք ժողովիդ հաղորդել. իսկ Գ. այն է անցեալ նիստին՝ այդ գրերուն մէկ մասը Պատրիարքարանը մոռցուած, եւ զանոնք բերելու համար մարդ զըրկուած ըլլալով՝ ժողովիդ հարկ դատած էր անոնց ընթերցումը վերապահել ետքի, այսինքն՝ ատենանին փակման պահուն. սակայն վարչական կազմակերպութեան ծրագրին 19րդ յօդուածին վրայ վիճարանութիւնն այնքան երկարեցաւ որ ատենանին փակումէն՝ առաջ պարսպոյ միջոց չթողուց մեղ նոյն գրերը կարդալու: Այս գրերը կը բաղկանան,

Ա. Գաւառներէն եկած յայտագրերէ, որ տեղեկութիւն կը հաղորդեն Հայաստանի ժողովրդեան կրթական վիճակին վրայ, 'ի պատասխան այն Պատրիարքական շրջաբերականին, որ յանուն Ազգային ժողովոյ յուղարկուած է գաւառներն այս խնդրոյն նկատմամբ:

Բ. Երեսփոխան Պոյաճեան Յովհաննէս էֆէնտի կրկնուած հրաժարագրերէն:

Գ. Ազգային ժողովոյ առաջին Ատենադըպիր Պէրպէրեան էֆէնտի երկրորդ հրաժարագրէն:

Դ. Ղալաթիոյ թաղեցւոց կողմէ մատուցեալ հանրագրէ մը, որուն իմաստը հաղորդուած է արդէն ժողովիդ, եւ կը մնայ այժմ յղել զայն ձեռնհաս Գիււանին 'ի նախաքննութիւն:

Այս գրերուն, մասնաւորապէս գաւառական յայտագրերուն ընթերցումը բաւական ժամանակի կարօտ է անշուշտ, մինչդեռ ժողովոյն ժամերն սուղ են, եւ օրակարգին մէջ ստիպողական խնդիր մ'ունի, որ է վարչական կազմակերպութեան ծրագրին քննութիւնն:

Այս վիճակին մէջ հարկ կզգամ ժողովին կարծիքը խնդրելու թէ կուզէ՞ արդեօք ատենական գործողութեանց վերաբերեալ գրերուն ընթերցումը լսել անմիջապէս թէ ոչ՞ վարչա-

կան կազմակերպութեան ծրագրին ստիպողութեան պատճառաւ՝ արժան կը դատի զանոնք այս անգամ ալ թողուլ մեկուսի, եւ անցնիլ օրակարգին:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ այդ գրերն ստիպողական հանգամանք չունին, կառավարեմ յաջորդ նիստին վերապահել զանոնք:

Այս առթիւ կուզեմ տեղեկանալ նաեւ թէ ի՞նչ եղաւ Վանայ երեսփոխանին ընտրութեան տեղեկագիրն: Ասկէ առաջ կարդացինք լրագրաց մէջ որ Ազաթէկեան Մարկոս էֆէնտին Վանայ գաւառին կողմէ ազգային երեսփոխան ընտրուեր է. եթէ ստոյգ է այս, կը խնդրեմ որ Մայր դիւանը հաճի այս մասին տեղեկութիւն տալ մեզ, եւ տեղեկագիրն միւս գրութեանց հետ ներկայել ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը ցաւիմ որ Գիււանը չի պիտի կրնայ Գափամաճեան էֆէնտի հարցման պատասխանել եւ գոհացնել իւր հետաքրքրութիւնը. վասն զի առ այժմ Գիււանն այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուի, որ ինքն ալ Գափամաճեան էֆէնտի նման՝ տեղեկութեան կարօտ է: Գիտէք արդէն որ նորընտիր Մայր դիւանի անդամոց մէջ միայն եւ կամ չհրաժարող, եւ մէկ անձ միայնակ չէ կարող անշուշտ անմիջապէս այս տեսակ խնդիրներով զբաղիլ, մանաւանդ երբ ժողովը վարչական կազմակերպութեան խնդրոյն այն աստիճան ստիպողութիւն ընծայած է, որ տրամադիր չէքնալին առայժմ ուրիշ խնդրով զբաղելու: Սակայն կը տեսնեմ որ Ազգ. ժողովին մէջ երեսփոխանաց շատ ակոռներ կան թափուր. ոչ միայն Վան, այլ եւ ուրիշ գաւառներ չունին դեռ իրենց երեսփոխանն. այս ընտրութիւններն անշուշտ անհրաժեշտ են. ուստի կը հաւատեմ ձեզ որ Մայր դիւանն առաջին առթիւ զարժանն պիտի ի դործ զնէ այս թերին լրացնելու համար:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ գոհ եմ այդ բացատրութենէն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ազգային վարչութիւնն տարտամ ու անկայուն վիճակի մը մէջ ինկած է. որու դարմանը Վարչական կազմակերպութեան խնդրոյն լուծումէն կախում ունի ուստի եւ կառավարեմ այս խնդրոյն, որոյ ստիպողութիւնն շատ անգամներ հաստատուած է, շարունակութիւնը ձեռք աւնուլ անմիջապէս եւ վերջացնել զայն, առանց ատենական գործողութեան համար ժամանակ վատնելու, որպէս զի կարելի լինի վարչական գործերն կանոնաւորել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս խնդրոյն վրայ Գափամաճեան էֆէնտի եւ Տ. Մատթէոս Եպիսկոպոս գրեթէ համաձայն են իրարու, սա տարբերութեամբ որ Գափամաճեան էֆէնտին, պայման կը դնէ որ եթէ ատենական գործողութեանց վերաբերեալ գրերն ստիպողութիւն չունին, ձեռք առնուի օրակարգը: Գիււանն արդէն յիշատակեց այդ գրերուն նիւթն, որմէ ստիպողութիւն ունին թէ ոչ՞ դիւրին է ըմբռնել, եւ որոշ կերպով կարծիք յայտնել, առանց թէութիւններ կցելու:

ԵՆԻՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ կը ձայնակցիմ Տ. Մատթէոս Եպիսկոպոսի առաջարկին, սակայն ինքը տարբերութեամբ մը:

Կարեւոր խնդիր մը կայ, որ ժողովին նիստերուն կանոնաւորութեանը կը վերաբերի եւ կարծեմ թէ օրակարգին անցնելէ առաջ՝ հարկ է այս խնդիրը կարգադրել, արտաքոյ կարգի ստիպողութիւն մ'ընծայելով անոր, ինչպէս ունի իրօք: Այս խնդիրն ժողովին գումարման օրին եւ ժամուն անյարմարութեան խնդիրն է, ներկայ ամառնային եղանակին մէջ: Ինձ կը թուի որ եթէ հինգշաբթի եւ շաբաթ օրերն տեղի ունենան մեր նիստերն, առաւօտեան ժամ 3 էն մինչեւ 5 տեւելու պայմանաւ, շատեր դիւրութիւն պիտի գտնեն ներկայ գտնուելու նիստերուն, դիւրութիւն, զոր չունին այժմ ուրբաթ թղթատարի օր լինելուն: Այս կարգադրութեամբ կրնանք կանոնաւորել մեր նիստերն, եւ Երեսփոխանաց հոծ թիւ մ'ունենալ, մինչդեռ

այժմ ժամ 6 ին ժողովի կը հրաւիրուինք 10 ին փակելու պայմանաւ, եւ հաղիւ կրնանք 8 ին բանալ ատենան, անմեծամասն թուով:

Ուստի եթէ ժողովն արժան կը դատի, կարգադրենք այս կերպով սոյն խնդիրն եւ անցնինք օրակարգին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտէք արդէն որ օրակարգին մէջ Վարչական կազմակերպութեան ծրագրէն յետոյ՝ երկրորդ խնդիր մ'ունինք, այն է ժողովարանի տեղափոխութեան եւ երեսփոխանաց բացակայութեան խնդիրն, որու վրայ քննիչ Մասնախմբի մը կողմէ տեղեկագիր մ'եկած է ժողովին: Ինչ որ այժմ Երեսփոխան էֆէնտի ժողովին անօրէնութեան կը ներկայէ, յարակից մի մասն է նոյն խնդրոյն, հետեւաբար՝ իւր առաջարկը կը նըշանակէ պարզապէս՝ յեղաշրջել օրակարգն, եւ երկրորդ խնդիրը նախադասել առաջնոյն:

ԵՆԻՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ո՛չ. իմ առաջարկս նոր է եւ տարբեր. ես առաջարկեցի միայն ժողովին գումարմանց սովորական օրն ուրբաթ, հինգշաբթի եւ շաբաթ օրերու վերածել, առանց ժողովարանի տեղափոխութեան եւ բացակայութեան խնդիրն յուղելու, որ ստուգիւ օրակարգն է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես այնպէս կը մըռնեմ թէ Երեսփոխան էֆէնտի առաջարկն օրակարգի երկրորդ խնդրոյն առաջնութիւն ընծայել կը նշանակէ. վասն զի ժողովոյ նիստի օրերուն փոփոխութեան խնդիրը, զոր Երեսփոխան էֆէնտի մէջ կը բերէ, յուղուած է արդէն՝ թէեւ տարբեր պայմանաց ներքեւ՝ քննիչ Մասնախմբին տեղեկագրին մէջ, Ձերազ Գասպար էֆէնտի մէկ առաջարկին վերայ, որ կը պահանջէր՝ ամիսն անգամ մ'ալ կիւրակէ օրը գումարել ժողովոյ նիստերն:

Ստուգիւ՝ քննիչ Մասնախումբն այս առաջարկը պատշաճ չէ դատած ընդունիլ, բայց ըստ որում նիստերու օրին նկատմամբ խնդիր մը կայ, զոր թերեւս ժողովը պիտի յուղէ, երբ ի քննին առնու Մասնախմբին տեւ

զեկազիրն, ըսել կըլլայ թէ Նուսուֆեան է-
ֆէնտի առաջարկը որքան ալ տարբեր հան-
դամանքներ ունենայ, ըստ սկզբան նոյննէ, եւ
յարակից օրակարգի մէջ նշանակուած խնդրոյն-
հետեւաբար ժողովը օրակարգը շրջած պիտի
լինի, եթէ ձեռք առնու Նուսուֆեան էֆէն-
տի առաջարկը: Իրանին պարտքն է խնդիրը
պարզել, որպէս զի թիւրիմացութեան տակ
որոշումներ չտրուին եւ չփոթութիւն չյա-
բուցանեն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովին առա-
ջին խնդիրը, զոր օրակարգը կը նշանակէ մեզ,
Վարչական կազմակերպութեան ծրագիրն է,
եւ չունինք ուրիշ խնդիր մ'որ քան զայն ստի-
պողական լինի, ինչպէս զիտել տուաւ նաեւ
Տ. Մատթէոս Եպիսկոպոս. ուստի պէտք է
զայն ձեռք առնուինք: Գալով Նուսուֆեան է-
ֆէնտի առաջարկին՝ կարելի է որ այն իւր կա-
րեւորութիւնն ունենայ, բայց մենք՝ ժողովա-
րանի տեղւոյն փոփոխութիւնէն, զոր երես-
փոխանաց ներկայութիւնը զիւրելու համար
կատարեցինք, չկրցինք օգուտ քաղել, ինչ-
պէս կրնայ Նուսուֆեան էֆէնտին զմեզ ա-
պահովել թէ նիստի օրին փոփոխութեանէն պի-
տի կրնանք այժմ արդիւնք մը ձեռք բերել:
Արդէն ժողովին ամբողջութիւնը պակաս է,
25 ի չափ երեսփոխաններ ունինք պակաս,
որոց տեղ նոր ընտրութիւն պէտք է կատա-
րել. երեք անգամէն աւելի բացակայ զըտ-
նուող երեսփոխանաց թիւը խիստ շատ է. ըստ
կանոնի պէտք էր ասոնք հրաժարեալ համար-
ուէին եւ ուրիշներն ընտրուէին անոնց տեղ-
սակայն շարունակ հրաւեր կընդունին իրր ե-
րեսփոխան՝ նիստերու ներկայանալու, բայց
ո՛չ կուզան, ո՛չ հրաժեշտ կուտան, եւ ո՛չ
ալ ժողովը զիրենք հրաժարեալ կը համարի,
սպասելով ընդունայն որ օր մը պիտի գան եւ
այսպէս կը զրկուի միշտ մեծամասնութենէ,
կանոնին տրամադրութիւնն անգործադրելի
թողելուն պատճառաւ:

Արդ՝ ես կառաջարկեմ օրակարգին անցնիլ
անմիջապէս, առանց ուրիշ որ եւ է խնդրոյ ըզ-
բաղելու. վասն զի վարչական կազմակերպու-
թեան խնդիրն ստիպողական է:

ԳՍՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը համա-
ձայնիմ Նուսուֆեան էֆէնտի, զի ժողովին
օրինակութեան նկատմամբ կարեւոր խըն-
դիր մը կը ներկայէ: Երեսփոխանաց բացա-
կայութեան խնդիրը քննելու համար ժողովը
ասկէ առաջ Մասնախումբ մը կազմեց, որու
անդամոց մին ալ ես էի: Սոյն մասնախումբին
առաջարկ մը ներկայացաւ, ժողովին նիստի
օրերուն նկատմամբ փոփոխութիւն մ'ընդունե-
լու, եւ կիրականօրեայ դումարումներ կատարե-
լու համար, սակայն Մասնախումբը նկատելով
որ կիրակէ օրն անյարմար էր, չընդունեց
առաջարկը: Իսկ Նուսուֆեան էֆէնտին կա-
ռաջարկէ այժմ հինգ շաբթի եւ շաբթ օրեր
գումարել նիստերը, եւ կը կարծէ բացակա-
յութեանց առաջքն առնուլ այս կերպով. այդ
օրերն անպատշաճ չեմ դատիր, եւ կառաջար-
կեմ առանց վիճարանութեան ընդունիլ առա-
ջարկուած փոփոխութիւնն եւ վերջ տալ այս
վիճակին, որպէս զի ամեն անգամ 25 երես-
փոխանաց ներկայութեամբ ատեն քանակու-
չստիպուինք:

ՇԱՀՊԱԶ Կ. ԷՖ. — Ես բոլորովին համակար-
ծիք եմ Քրիստոստուր էֆէնտի: Եթէ օրէնք
մը կայ հաստատուած բացակայից համար,
պէտք է զայն գործադրել, եւ երեք անգամ
բացակայ գտնուող երեսփոխանը հրաժարեալ
հրատարակել: Ես ալ կառաջարկեմ որ այդ օ-
րէնքն գործադրուի անխտիր. եթէ ոչ՝ նիստի
օրը փոխելով չպիտի կրնանք բացակայու-
թիւններն արդելուլ եւ մեծամասնութիւնն ա-
պահովել ժողովին մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւունք ունի Շահպազ
էֆէնտին. հաստատեալ օրէնքը պէտք է գոր-
ծադրել, միայն թէ պարագայ մը կայ, զոր
բացատրելու պէտք կըզգամ:

Ժողովը բացակայից նկատմամբ կանոնին
տրամադրութիւնը խիստ գտնելով՝ զայն մեղ-
մել ուղած, եւ առկախելով գործադրութիւնն՝
Յանձնախումբի մը յանձնած է քննել խնդիրն,
որու վրայ յանձնախումբին տեղեկագիրն ժողո-
վին հաղորդուած եւ Օրակարգին մէջ մտա-

դաւած է: Իսկ Նուսուֆեան էֆէնտի առա-
ջարկն, ինչպէս ըսի արդէն, այդ Յանձնա-
խումբին ուսումնասիրած խնդրոյն մի մասն է,
եւ այդ առաջարկին նկատմամբ կարծիքները
համաձայն չեն իրարու. վասն զի ոմանք եթէ
կը յարին անոր, եւ կուզեն որ նկատողութեան
առնու զայն ժողովը, ուրիշներ անփոփոխ օ-
րակարգին հետեւիլ կուզեն:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Թէ եւ Նուսուֆե-
ան էֆէնտին կը սնդէ թէ իւր առաջարկն,
զոր ըրաւ նիստի օրին փոփոխութեանը նը-
կատմամբ, չփոխեր օրակարգն, այլ մի տար-
բեր եւ նոր խնդիր կը պարունակէ, սակայն
ես կը ըսեմ թէ այս առաջարկը նոր խնդիր մը
երեւան չհաներ, եւ կը փոխէ Օրակարգն. Բա-
ցակայութեանց խնդրոյն քննիչ Յանձնախումբին
տեղեկագիրն, որ Օրակարգին մէջ է արդէն,
քննած է ժողովին դումարման տեղւոյն եւ
օրուան խնդիրներն: Եւ թէպէտ Յանձնախում-
բն ընդունած չէ դումարմանց օրը փոփո-
խելու մասին երեսփոխանի մը կողմէ եղած
առաջարկն, եւ դարձեալ ուրբաթ օրն անփո-
փոխ պահած է դումարմանց համար, բայց
քանի որ այս կէտին վրայ խնդիր յուղուած
է, եւ վերջապէս երբ ժողովին որոշման
ներկայանայ տեղեկագիրն, կրնան երեսփո-
խանաց կողմէ նոյն կէտին նկատմամբ այլ
եւ այլ կարծիքներ ու առաջարկութիւններ
մէջ բերուիլ, ըսել է այս կէտը չզաղրել խըն-
դիր մը լինելէ: Արդ՝ եթէ ընդունուի Նու-
սուֆեան էֆէնտի առաջարկն, ուրիշ հե-
տեւանք չունենար, բայց միայն սա թէ ժո-
ղովը Օրակարգի երկրորդ խնդիրը ձեռք առած
կը լինի. առաջինն՝ որ Վարչական կազմա-
կերպութեան ծրագիրն է, յետաձգելով, թէ եւ
անոր ստիպողութիւնն ընդունուած է, եւ այն
պէտք է լինի այսօր մեր վիճարանութեան
նիւթն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ եւ այս խնդրոյն վը-
րայ տակաւին խօսք ուղղուեր կան, բայց կա-
րելի կը կարծեմ առանց վիճարանութիւնն ա-

ւելի յառաջ մղելու, լուծման մի եղանակ զըտ-
նել եւ վերջացնել խնդիրն:

Գիտէք որ այս խնդիրը ծագում առաւ
այն պահուն, երբ Գիւտնը Վարչական կազ-
մակերպութեան խնդրոյն ստիպողութեանը
պատճառաւ՝ ժողովին կամքը կուզէր հասկնալ
ատենական գործողութեանց կատարման կամ
յետաձգման մասին: Բոլոր ատենախօսք հա-
մաժող էին թէ այս գործողութիւնները յե-
տաձգել եւ օրակարգին անցնիլ հարկ էր.
բայց նոյն իսկ վարչական կազմակերպութեան
խնդիրն հեշտիւ վերջացնելու եւ երեսփոխա-
նաց ներկայութիւնն ապահովելու գիտմամբ,
առաջարկ մ'երեւան եկաւ նիստի օրը փոփոխե-
լու համար, եւ այն ենթադրութեամբ ան-
շուշտ որ կարճ վիճարանութիւն մը կը լաւէր
այդ խնդիրը լուծելու: Սակայն ենթադրութիւնը
վրիպեցաւ եւ վիճարանութիւն մ'սկսաւ, ոչ
թէ առաջարկի բուն նիւթին, այլ զայն նկա-
տողութեան առնուլ կէտին վրայ, այնպիսի
կերպով, որ վիճարանութիւնն արժարծելու ե-
րեւոյթ ունի: Երբ այդ առաջարկն այսպէս
խնդրոյ ներքեւ կիցնայ, եւ ժողովին ժամե-
րուն կսպանայ, ատենական գործողութեանց
յետաձգման համար Գիւտնին ըրած խնդիրն
բոլորովին իւր նպատակին հակառակ արդիւնք
յառաջ կը բերէ, եւ անշուշտ ոչ մի երեսփո-
խան կրնայ հաւանիլ այս ժամանակի կորուս-
տին:

Արդ՝ եթէ այդ փոփոխութեան խնդիրը,
կէս ժամու մէջ վերջանալի խնդիր մ'է, այս
վիճարանութիւններն անտեղի են, եւ լաւա-
գոյն է այժմ օրակարգին անցնելով ծրագրին
քննութիւնը ձեռք առնուլ, եւ ատենանին փա-
կուցնել կէս ժամ առաջ ընդհատելով զայն,
անցնիլ օրակարգի երկրորդ խնդրոյն, որ նաեւ
պիտի պարզէ մեր առջեւ նիստի օրի փո-
փոխութեան խնդիրն: Իսկ եթէ կը կարծէք որ
այս խնդիրն զիւրաւ վերջանալու բնութիւն
մը չունի, այն ատեն Վարչական կազմակեր-
պութեան խնդրոյն վնասած կըլլանք զայն
յուզելով:


Ուստի՝ եթէ կը հաճիք, այս տրամադրու-
թեամբ կանցնինք այժմ օրակարգին. իսկ ե-

Թէ կուզէք տակաւին այս վիճարանութիւնը շարունակել, պատրաստ եմ խօսք տալու :

ՁԱՅՆԵՐ ԱՄԵՆՈՒՍՏ . — Քուէի դրէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Շատ աղէկ, ուրեմն ժողովին քուէն կը խնդրեմ այս մասին :

Հեռեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ խնդիրն, եւ ժողովը մեծագոյն մասամբ կՈՐՈՇէ անցնել օրակարգին :



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

Ծրագիր վարչական կազմակերպութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ինչպէս կը յիշէք ժողովն իւր նախընթաց նիստին մէջ Վարչական կազմակերպութեան ծրագիրն յօդուած առ յօդուած վիճարանութեան ենթարկեց, եւ ահոր 18 յօդուածները քուէարկելով հաստատեց : Իսկ 19րդ յօդուածն, որ կրօնական Խորհրդականին պաշտօնը կը գծէր, եւ կը տրամագրէր որ Եպիսկոպոսի աստիճան ունենայ ընտրեալն, այլ եւ այլ զխտորութեանց ենթակայ եղաւ . մասնաւանդ Եկեղեցական հարց կողմէ, եւ այնքան երկարեցաւ վիճարանութիւնն, որ ատենին փակման ժամն հնչելով չկրցաւ իւր լուծմանն յանդիլ խընդիրն, եւ մնաց տարւած վիճակի մէջ : Այսօր վիճարանութիւնը պիտի շարունակուի նոյն յօդուածին վրայ . անցեալ նիստէն արդէն

խօսք խնդրողներ կային, որոց անունը նշանակող թուղթը չդանուեցաւ թէպէտ այս սեղանին վրայ, բայց Գիււանիս յիշողութեան դիմելով նոյն կարգաւ խօսք կուտամ նախ Տ. Մկրեան Հօր :

ՄԿՐԵԱՆ Տ. Յ. ՔԶՆՅ . — Նախորդ նիստին մէջ ես ալ տարակարծիք դանուած էի 19րդ յօդուածին մի մասնաւոր տրամադրութեան նկատմամբ : Նիստն աւարտելէ յետոյ՝ Եկեղեցական երեսփոխանք առաջարկեցին առանձինն դուժարուիլ, եւ ըստ որում խնդիրն կրօնական կէտի մը վրայ է, խորհրդակցելով այս մասին՝ համաձայնութիւն մը յառաջ բերել :

Սոյն դուժարումն եւ խորհրդակցութիւնը տեղի ունենալով՝ Եկեղեցական երեսփոխանաց մէջ գրեթէ համաձայնութիւն գոյացաւ, 19րդ եւ 41րդ յօդուածոց վրայ՝ որ իրարու հետ առնչութիւն ունին՝ ինչ ինչ բարեփոխումներ կատարուելով, զորս Տ. Մատթէոս Եպիսկոպոս պիտի ներկայէ ժողովիդ :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ . — Նախորդ նիստին մէջ նախ Տ. Մկրեան Հայրն առաջարկեց եւ յետոյ ես եւ ուրիշներ ձայնակցելով իրեն կըրկնեցինք որ 19րդ յօդուածին այն տրամադրութիւնն, որ կրօնական Խորհրդականն Եպիսկոպոսաց դասէն կը սահմանէր, բարեփոխուի եւ Եպիսկոպոս բառը վերնալով պարզապէս տրամադրուի որ Խորհրդականը Եկեղեցական մը լինի :

Այժմ Տ. Մկրեան Հօր խօսքերէն այնպէս կըմբռնեմ թէ ետ կառնու իւր առաջարկն . բայց ես կը սնդեմ անոր վրայ, եւ կըսեմ թէ փոխանակ պահանջելու որ անպատճառ Եպիսկոպոսաց դասէն լինի Խորհրդականը, լուսագոյն է արժանաւորն եւ ձեռնհասն՝ Եկեղեցականութեան ո՛ր դասէն ալ լինի՝ զայն կոչել պաշտօնի : Չզիտեմ թէ Եկեղեցական հարց համաձայնութիւնը, զոր ծանուցին մեզ, ինչ հիման վրայ է, բայց գիտեմ հաւաստեալ որ մեզի համար ամենէն օգտակար եւ բանաւոր եղանակն այն է, որ պաշտօնը կընծայէ ան-

խըտիր արժանաւորագունին, առանց ակնառութեան աստիճանի :

Երեսփոխան էֆէնտիններէն մին կը սնդէր անցեալ նիստին՝ թէ ազդին մէջ Եկեղեցականաց ընտրելադոյն մասն, որ արժանիք ունի, Եպիսկոպոսութեան աստիճանի բարձրացած է արդէն . եւ թէ այդ դասուն մէջ պէտք է փնտռել Խորհրդականի պաշտօնին արժանի մարդն : Անշուշտ Վարդապետաց համար կը գրուէր այս խտիրն : Իմ միակ պատասխանս սա է այդ առարկութեան դէմ որ խիստ սըլիտ սկզբունք մ'է՝ ենթադրել թէ անոնք որ պատուոյ աստիճանի հասած են, իրենց արժանեօքը բարձրացած լինին անպատճառ, իսկ անոնք որ չեն հասած, իրենց ապիկարուեամբն ետ մնացած ըլլան :

Եկեղեցական դասակարգութեան վրայ ալ խնդիր մը յուղուեցաւ : Եկեղեցական հայրերէն ոմանք կառարկէին թէ կրօնական մը չէ կարող աստիճանաւ իրմէ բարձրագունին հըրամայել եւ ասկէ կեղծակացնէին թէ Խորհրդականն Եպիսկոպոս մը միայն կրնայ լինիլ : Այս առարկութիւնն ալ սխալ է : Պէտք է իմիտ ածել թէ այդ պաշտօնեայն ոչ թէ զինքըն, այլ Պատրիարքը՝ գործադիր իշխանութեան գլուխը կը ներկայացնէ, որմէ կոչուած է պաշտօնի : Ինք երբէք անձնականութիւն չունի, այլ իրբեւ ներկայացուցիչ Պատրիարքին, անոր հաւանութեամբ պարտաւոր է գործել ինչ որ գործէ : Իւր ամեն տնօրինութիւններն անոր հաճութեան գրոշմն եւ ամէն պաշտօնական թուղթերն անոր ստորագրութիւնը պէտք է կրեն, որ գործադրութիւն գտնեն : Հեռեւարար դասակարգութեան խընդիր չկայ այս տեղ :

Երկու խօսք ալ քահանայից ընտրութեան նկատմամբ թէ Վարդապետաց մէջ արժանաւորներն են որ Եպիսկոպոսութեան կը բարձրանան, ինչ պիտի ըսենք Քահանայից նըկատմամբ, որ Եպիսկոպոս չեն կարող լինիլ : Միթէ Եկեղեցականաց այս դասուն մէջ կարելի չէ՞ գտնել մէկն, որ այս կամ այն Եպիսկոպոսէն աւելի աղէկ կարենայ գործել . ըստ իս զրկանք մ'է՝ Քահանայներն ի բաց թողուին, եւ այս զրկանքը պէտք չէ կատարուի :

Օրէնքը հաւասար աչօք կրնայ նկատել զամենքըն, եւ բարձ ու սղաշտօն արժանաւորաց կընծայէ անխտիր : Մասնաւանդ որ եթէ գիտենք Երոպական ազգաց պաշտօնեական զրութիւնն, որու օրինակին հետեւիլ կուզենք, պիտի տեսնենք որ անոնց մէջ մինչեւ իսկ աշխարհական են կրօնական գործոց պաշտօնեայներն : Արդ՝ քանի որ Երոպական ազգաց մէջ աշխարհականներն անգամ կը մասնակցին կրօնական գործոց . իրաւունք չէ որ մենք Եկեղեցականներն զրկենք աստիճանի խտիրներով . ուստի կը սնդեմ որ բարձուի 19րդ յօդուածին մէջէն Եպիսկոպոս բառն, եւ գրուի առանց բացատրութեան թէ,

« Կրօնական Խորհրդականն Եկեղեցական մը կը լինի : »

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ . — Թէ եւ խօսք խնդրած էի սոյն խնդրոյն համար, բայց ըստ որում Տ. Մկրեան Հայրն յայտարարեց թէ Եկեղեցականաց մէջ համաձայնութիւն գոյացած է, եւ թէ՛ Տ. Մատթէոս Եպիսկոպոս անոր արդիւնքը պիտի հաղորդէ . օգտակար կը լինի որ իմանանք նախ Եկեղեցական հարց համաձայնութեան արդիւնքն, եթէ առանց այս մասին տեղեկութիւն ունենալու՝ իւրաքանչիւր ոք շարունակէ իւր կարծիքն ըսել անօգուտ եւ երկար վիճարանութիւն մը պիտի լինի : Ուստի կը խնդրեմ որ Գիււանը հաճի հրաւիրել զՏ. Մատթէոս Եպիսկոպոս ժողովին բացատրելու ինչ որ պիտի խօսի :

ԻԻԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ . — Կը ձայնակցիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ինչպէս յայտարարեցի ի սկզբան, նախընթաց նիստին խօսից կարգին հետեւելով խօսք տալ սկսայ երեսփոխանաց : Արդէն կարգը Տ. Մատթէոս Եպիսկոպոսինն է այժմ, եւ անշուշտ պիտի հաղորդէ ժողովին այն բարեփոխումները, զորս Եկեղեցական հարց իրենց համաձայնութեան մէջ որոշած են ժողովին առաջարկել :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ . — Անց .

եալ նիստին մէջ՝ երեսփոխան էֆէնտիներ, ԱՅրդ յօդուածին նկատմամբ երկու խնդիր ծագեցաւ. մին էր Խորհրդականին պատասխանատուութեան մասն, եւ միւսն անոր եկեղեցական աստիճանին, այսինքն Եպիսկոպոս մ'ըլլալու կամ չըլլալու խնդիրը :

Եկեղեցական երեսփոխանք առաջին կէտին մէջ համաձայնեցան իրարու. ծրագրին ԱՅրդ յօդուածէն քանի մը պարբերութիւններ անցընելով՝ ԱՅրդ յօդուածին մէջ, այսինքն կըրօնական գործոց Խորհրդականին պաշտօնէն անջատելով ջանի մը գործեր, եւ վերագրելով կրօնային ատենանին : Ըստ ծրագրի կրօնական Խորհրդականին պատաւորութիւնն էր ՚ի մէջ այլոց « Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւններն ու աւանդութիւններն անեղծ պահել տալ, կրօնական զգացումն ազգին մէջ զարգացնելու ջանալ, Եկեղեցեաց եւ եկեղեցական բարեկարգութեանը հսկել : » Այս ամէնն կրօնային ատենանին պաշտաման մէջ անցան, եւ ուրիշ քանի մը կէտեր լծորդուեցան Խորհրդականին պաշտաման : Իսկ անոր եկեղեցական աստիճանը տրամադրող պարբերութիւնն ալ փոփոխութիւն մը կրեց :

Ահաւասիկ կը կարգամ ԱՅրդ յօդուածն եկեղեցական երեսփոխանաց առաջարկած այս բարեփոխմանց համեմատ խմբագրեալ :

« Յօդ. 19. կրօնական Խորհրդականին պաշտօնն է ազգին կրօնական գործոց անջուղութիւնը : Իւր պարտաւորութիւնքն են՝ եկեղեցական պաշտամանց, ընթերցուածոց եւ երգեցողութեանց կանոնաւորութեան, ինչպէս նաեւ ազգային վարժարանաց եւ ընծայարանաց մէջ ֆրիստոնէական կրօնի ուսուցման հսկել, կրօնագիտութեան եւ երգեցողութեան դասագիրքերն ու դասատուները որոշել եւ արտօնել, նոյնպէս եկեղեցական գրեաց տպագրութիւնն արտօնել, ուսեալ եւ արժանաւոր եկեղեցականներ հասցնելու, եկեղեցականաց վիճակը բարւոքելու եւ անոնց սպազայն ապահովելու հոգ տանիլ : »

« կրօնական Խորհրդականը Պօլիս գըտնուող կամ վիճակաւոր Եպիսկոպոսներէն մին կը լինի, եթէ վիճակաւորներէն լինի ընտրեա-

լը, իւր վիճակը փոխանորդով մի կը կառավարէ ցլրուսն իւր սաշտօնավարութեան : »

Իսկ ծրագրին ԱՅրդ յօդուածն, զոր աւելորդ է ձեզ կարդալ, զի ՚ի ձեռքն ունիք ծրագիրն, սապէս բարեփոխել արժան դատուեցաւ :

« Յօդ. 41. կրօնային ատենանին պաշտօնն է ազգին կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնն : Իւր պարտաւորութիւնքն են՝ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անեղծ պահել տալ. կրօնական զգացումն ազգին մէջ զարգացնելու ջանալ. Եկեղեցեաց եւ եկեղեցականաց բարեկարգութեան հսկել, ազգին մէջ ծագած կրօնական խնդիրներն ու վէճերն քննել եւ լուծել : »

« Սոյն ատենանը կը քննէ եւ կը դատէ եկեղեցականաց պաշտօնին եւ պարտաւորութեանը վերաբերեալ խնդիրները : »

« Նմանապէս ձեռնադրութեան համար ներկայացեալ ընծայացուած արժանիքը կը քննէ, կ'ստուգէ, եւ անոնց ընդունելութիւնը կորոշէ : Նոյնպէս կը հսկէ Գլխաց ընկերութեանց վրայ, եւ զարժանաւորս ՚ի պաշտօն գպրութեան կը կոչէ : »

Այս ԱՅրդ յօդուածէն յետոյ՝ ուրիշ նոր յօդուած մ'ալ յաւելուլ պատշաճ թուեցաւ իբրեւ 42րդ :

Ահաւասիկ յաւելեալ յօդուածն :

« Յօդ. 42. կրօնային ատենանն իւր կըրօնական գործոց համար 13 օրն անգամ մի կը գումարի ընդ նախագահութեամբ Պատրիարքին կամ ՚ի բացակայութեան Նորա, կրօնական Խորհրդականին : »

Ասոնցմէ դատ ծրագրին 42րդ յօդուածին՝ որ 43րդ պիտի ըլլայ, եթէ մեր առաջարկած նոր յօդուածն ընդունուի, երկրորդ պարբերութեան վերջը կցել կառաջարկենք հետեւեալ հատուածը :

« . . . եւ ձեռնադրութիւնը սահմանակից վիճակաւոր Եպիսկոպոսին կը յանձնուի : »

Ինչպէս կը տեսնէք սոյն յօդուածին մէջ տրամադրութիւն մը կը յաւելնայ, դաւաններու մէջ կատարելի ձեռնադրութեանց մասին :

Գաւառաց մէջ շատ մ'անպաշտօն եպիսկոպոսներ աստ եւ անդ անհրաման ձեռնադրութիւններ կը կատարեն, ինչպէս կը զրուցուի Տիգրանեան եպիսկոպոսի վրայ, որու դէմ գանդաւաներ ուղղուած են մինչեւ Էջմիածին : Երպէս զի այսպիսի անտեղութիւններ տեղի չունենան, արժան համարուած է այն դաւառին՝ ուր եպիսկոպոս չէ առաջնորդն, վերաբերեալ ձեռնադրութիւններն յանձնել սահմանակից վիճակաւոր Եպիսկոպոսին :

Ահաւասիկ ասոնք են այն բարեփոխումները, զորս եկեղեցական երեսփոխանք համաձայնութեամբ ընդունեցին իրենց մէջ, եւ ժողովոյդ առաջարկել պատշաճ համարեցին :

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ. — (Թուղթ մ'ի ձեռնին) Ես խօսելու մտադիր չէի, Տեա'րք, բայց վասն զի ծանր խօսքեր եղան քիչ մ'առաջ, որ հակառակ էին Հայաստանեայց եկեղեցւոյ սահմանադրութեան ոգւոյն, կատիպուիմ կարգալ սա գրածս, որ դուք եւս լուսաբանուիք :

Վարչական կազմակերպութեան ծրագրի սոյն ԱՅրդ յօդուածը բաւական մեծ վիճաբանութեանց տեղի տուաւ մեզ. հարկաւ երբ խնդիր մը լաւ սերտուած չէ, թերի եւ յոռի մեկնաբանութեանց նիւթ կը դառնայ : Այս յօդուածն այնպիսի մէկ կարեւոր յօդուած է, որ ուղղակի Հայաստանեայց եկեղեցւոյ հիմնական օրինաց այսինքն Սահմանադրութեան ոգւոյն դպչելով կը խախտէ այն եկեղեցին, զոր մեր նախնիք արիւնով արցունքով պահպանեցին, եւ մեզ անեղծ աւանդ թողուցին. վասն զի ազգային նախնի ժամանակաց հայրենական սխրալի յիշատակներէն ի՞նչ մնաց մեզ, եթէ ոչ եկեղեցին. այս եկեղեցին է, որ կոյս մնաց ազգին մէջ հակառակ քաղաքական ամենամեծ տագնապներու, այս եկեղեցին է որ սուրբ մնաց հակառակ հերձուածողական սոսկալի փոթորիկներու, այս եկեղեցին է որ իւր ծոցին մէջ կրեց Հայ ազգայնութիւնն, ՚ի Սմա տաւաղեցան մեր հայրերն ու մայրեր, երբ բռնութեան քամին կը կործանէր մեր հայրենի տունը, եկեղեցին . . . :

ՉԱՅՆԵՐ. — (Ընդմիջելով) Եկեղեցւոյ դէմ ո՞վ է յարձակողն՝ որ այդ խօսքերը կընէք :

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ. — (Յոյց տալով մատնանիշ զՊաշտօնական էֆէնտին) Նա ըսաւ թէ Խորհրդական Եպիսկոպոսի մը տեղ եկեղեցական մը լինի : Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ է ֆահանայի մը կրօնական գործոց տեսչութիւն տալը, այդ երիցականութիւն է. Եպիսկոպոսութիւն ըսելը տեսչութիւն ըսել է . . . :

ՉԱՅՆԵՐ. — Ի՞նչ կը նշանակեն այդ խօսքերն :

(Յուզում ժողովին մէջ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Ընդմիջելով) կը տեսնէք որ ձեր խօսքերը ժողովին զգացումները կը վիրաւորեն, եւ մանաւանդ օտար են խընդրէն : ուստի հաճեցէք ձեր գրաւոր բանախօսութեան այն մասերը միայն կարդալ, որ մեր քննած խնդրոյն կը վերաբերին ուղղակի :

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ. — (Շարունակելով) Շատ աղէկ. քանի որ ժողովին զգացմանց կը դպչին խօսքերս, կընդհատեմ այս մասն, եւ կանցնիմ խնդրոյն վրայ խօսելու (կը շարունակէ ընթերցումն) :

Արդ՝ Աղգ. ժողովը նկատելով որ Ա. Պատրիարքը ծանրաբեռնեալ է իւր շատ մը պաշտօններով, ինչպէս միւս պաշտօններն, նոյնպէս կրօնական գործոց պաշտօնն ալ Խորհրդական Եպիսկոպոսի մը կը յանձնէ : Այդ Եպիսկոպոսն ըստ ԱՅրդ յօդուածոյ պատասխանատու ճանաչելով անհատաբար Երեսփոխանական ժողովոյն, որ հակառակ է բոլորովին Հայաստանեայց եկեղեցւոյ սահմանադրութեան եւ նորա անկախութեան ոգւոյն. վասն զի այն ատեն մէկ առաջնորդական վիճակի մէջ երկու Եպիսկոպոս պիտի լինին, երկրորդն իսկ պատասխանատու, որք իրարու մէջ երբ անհամաձայնութիւն ունենան, Վարչական

խորհրդոյն կամ կրօնական ատենանին կամ ժողովոյս պիտի դիմեն :

Եկեղեցին մի Եպիսկոպոսութիւն կը ձանձնէ մէկ թեմի մէջ : այդ Եպիսկոպոսութիւնն ի հարկին ժողովով կը գործէ եւ ոչ երբէք խորհրդատու մէկ անձով : այս իսկ է մեր Եկեղեցւոյ վարչական դրութեան ոգին . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Ընդմիջելով) Գլխաւոր կէտ մը կայ, որ ցարդ անհասկնալի մնաց : Գործ յօդուածին վրայ եկեղեցական երեսփոխանաց համաձայնութեամբ քանի մը բարեփոխում ներկայացան այժմ ժողովին, դուք ալ իբր եկեղեցական երեսփոխան համամիտ էք այն առաջարկին, յիշէ հակակարծիք կը գտնուիք : Այս կէտը հաճէիք պարզել, որ թերեւս օգնէ ձեր խօսքերը լաւ հասկնալու :

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ. — (Շարունակելով) Եզրակացնեմ խօսքս : Ս. Պատրիարքն իբրեւ Պատրիարք եւ Եպիսկոպոս Կ. Պօլսոյ, պատասխանատու է միշտ, Խորհրդականն ալ կրնայ վիճակաւոր Եպիսկոպոս մը լինիլ, որ պատասխանատու լինի յանուն Պատրիարքին այն բաներուն համար, որ ընթացիկ գործեր են, եւ չունին բնաւ վարդապետական եւ վարչական հանգամանք :

Արդ՝ ես ալ այս կերպով համաձայնած եմ եկեղեցական հարց, միայն սա տարբերութեամբ՝ որ Խորհրդականի պաշտօնն վիճակաւոր Եպիսկոպոսի մը յանձնուելու կողմն եմ, Կ. Պօլիս գտնուողներն ի բաց թողլով :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Քիչ մ'առաջ Տ. Վահան վարդապետ իմ մէկ խօսքս յիշեց եւ զիս ցոյց տալով նա այսպէս զրուցեց, ըսաւ : Միթէ եկեղեցականի բարեկրթութեան հակառակ չէ՞ նա ըսելով մէկը ցցնել : Ինք զիտէ անունս, եւ յանուննէ կրնար խօսիլ իմ վրաս : Բայց եթէ չզիտնար իսկ, չէ՞ր կրնար երեսփոխան մ'ըսելով ինձ ակնարկել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրնաք հաւատարի լինիլ, Պալեօզեան էֆէնտի, որ Տ. Վահան

վարդապետ այդ բառը գործածած չէ՞ զձեզ նախատելու մտօք, այլ վիճաբանութեան միջոցին իւր կարծիքը պաշտպանելու համար՝ եռանդով զեղուն՝ բարեմտաբար զրուցած է : Ուստի պէտք չէ վիրաւորուիք : Եթէ Գլխանը նախատական նպատակ մը նշմարէր այն խօսքին մէջ, առանց ազդարարութեան չէր անցնէր :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Շատ աղէկ, կընդունիմ ձեր բացատրութիւնը :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Չգիտեմ թէ ինչ փաստի վրայ կը յենուն անոնք որ կը պընդեն թէ Խորհրդականը պէտք է Եպիսկոպոս մը լինի, եթէ խնդիրը զուտ կրօնական կամ եկեղեցական լինէր, ես ալ պիտի համաձայնէի իրենց : բայց ըստ որում վարչական կազմակերպութեան կէտի մը վրայ է, չարժեր խնդիր յարուցանել եկեղեցականաց, եւ թող ներեն ինձ Պատկառելի հարք՝ ըսել որ իրենց լուսամտութենէն չէր սպասուէր այսպիսի ժամանակի մը մէջ խնդիր յարուցանել մեր առջեւ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — (Ընդմիջելով) Մասնաւորեցէք ձեր խօսքը, եկեղեցականք համաձայնած են :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. (Շարունակելով) Կաղաչեմ մի ընդմիջէք խօսքս : Եթէ կուզէք պատասխանել ինձ, կրնաք խօսք առնուլ :

Ըսի թէ խնդիրը վարչական կազմակերպութեան վերաբերեալ կէտի մը վրայ է. ձեռք առնունք Սահմանադրութիւնը եւ պիտի տեսնենք որ կրօնական ժողովոյ անդամոց թիւը սահմանած ատեն՝ տասն եւ չորս եկեղեցականէ կը բաղկանայ, կըսէ . . . :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — (Ընդմիջելով) Կրօնական ժողովոյ անդամոց թիւը քսան է ըստ Սահմանադրութեան եւ ոչ տասն եւ չորս :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այո, անդամոց թիւը տասն եւ չորս է : չնորհակալ եմ որ յիշեցուցիք ինձ :

Խնդիրն այս է վերջապէս որ Սահմանադրութիւնը չպահանջեր որ կրօնական ժողովոյ անդամներն Եպիսկոպոս լինին, այլ եկեղեցական դասէն պիտի լինին, կըսէ, առանց աստիճանաց խտր ընդունելու :

Պաշտօնն, ինչպէս ըսաւ Պալեօզեան էֆէնտին, արժանաւորին եւ ձեռնհասին կը տրուի, եւ բնաւ աստիճանի չկատուիր : Քահանայից դասուն մէջ ալ կրնան գտնուիլ այնպիսիներ : որ ձեռնհասութիւն ունենան Խորհրդականի պաշտօնը լաւագոյն կերպով վարելու, ինչո՞ւ ուրեմն կապենք մեր ձեռքերն, եւ չկարենանք ընտրել ազատօրէն որ եկեղեցականն որ արժանի է պաշտօնին : Ես Պալեօզեան էֆէնտի առաջարկը համաձայն կը գտնեմ բոլորովին թէ մեր Սահմանադրութեան ոգւոյն, որ ինչպէս յիշեցի, խտր չդնէր եկեղեցականաց մէջ, կրօնական ժողովոյ անդամոց ընտրութեան նկատմամբ, եւ թէ սկզբանց մեր եկեղեցւոյ, որ՝ ազատամիտ է եւ թոյլտու, եւ ոչ երբէք խտտապահանջ : Կը պնդեմ ուրեմն որ Եպիսկոպոս բառին սեղ եկեղեցական բառը գրուի :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Խօսք կառնու՞մ պատասխանելու համար Պալեօզեան էֆէնտի, որոյ խօսքերն կակնարկէին սոյն խնդրոյն վերայ անցեալ նիստի մէջ իմ յայտնած կարծիքներս : Պալեօզեան էֆէնտին՝ որ չյիշեր իմ անունս, նոյնպէս լաւ չյիշեր իմ խօսքերս եւ կը վերագրէ ինձ կարծիք մը, զոր չեմ յայտնած : Կուզէ որ ըսած ըլլամ թէ արժանաւոր եկեղեցականք միայն Եպիսկոպոսական դասուն մէջ կը գտնուին եւ թէ ուրիշ կարգէ եկեղեցականք արժանիքէ զուրկ են : Ես գիտեմ թէ ամեն աստիճանի մէջ արժանաւորներ եւ անարժաններ կրնան գտնուիլ, բայց ես ուզեցի ժողովոյս առջեւ կամուկամութիւն մը դրնել եւ ըսել « կամ սէտք է ընդունիլ յանուն եկեղեցւոյ եւ եկեղեցականութեան պատուոյն թէ Եպիսկոպոսք արժանեօք, կարողութեամբ եւ փորձառութեամբ ընտրելագոյն եկեղեցա-

կանք են ընդհանրապէս եւ կամ ընդունիլ թէ եկեղեցին իւր պատիւները կուտայ անարժաններու եւ նսեմութեան մէջ կը թողու արժանիքը, եւ վասն զի կը հաւատայի թէ մեր մէջէն ոչ ոք պիտի ուզէր մի այսպիսի թշնամանք դնել մեր եկեղեցւոյն եւ անոր պաշտօնէութեան, կառաջարկէի կրօնական գործոց Խորհրդականի ընտրութիւնն Եպիսկոպոսաց մէջէն ընել՝ իբրեւ եկեղեցւոյ բարձրաստիճան եւ մեծարժէք պաշտօնէից, ինչպէս ծրուիրը կը տրամադրէր : Եւ յետոյ, վերջապէս մեր եկեղեցւոյն մեծ նախատինք մ'ընել պիտի նշանակէր՝ ընդունիլ թէ մի եւ նոյն անիրաւութիւնք եւ զեղծմունք, որ տեղի ունին աշխարհային պաշտօններու եւ պատուոյ բաշխման մէջ, կը գործուին նաեւ եկեղեցւոյ գըրկին մէջ : Եկեղեցւոյ պաշտօններն նուիրական եւ սուրբ են, եւ այն պատի պատու մթին ձանրայներն, որ աշխարհային մեծութեանց կը տանին, միշտ չեն կարող եկեղեցական պատուոյ եւ պաշտամանց առաջնորդել :

Ընդգլխմախօսս, որ օտար լեզուներով հրատարակութիւններ կը կարդայ, եւ Եւրոպական տէրութեանց վարչային իրաց հմուտ կերեւի, օրինակ կը բերէ Եւրոպական ազգաց կրօնից պաշտօնեայներն, որ աշխարհական են, եւ չկրնար ըմբռնել թէ ինչո՞ւ կը վարանինք Վարդապետ կամ Քահանայի յանձնել նման պաշտօն մը : Բայց այս երկու պաշտօնները նման կարծելով, մեծապէս կը սխալի : Նախ մեր կարգելիք Խորհրդականին գործը զուտ կրօնական է, Եւրոպացւոց աշխարհական կրօնից պաշտօնեայն միջնորդ մ'է Պետութեան եւ եկեղեցւոյ մէջ, զի Եւրոպայի մէջ եկեղեցի եւ պետութիւն բաժնուած են : Բայց այսու ամենայնիւ ամէնօրեայ յարաբերութիւններ ունին, եւ երկուքին մէջ միշտ կնճիւղներ կրնան ծագիլ : Բայց ստախ մի տեսակ եկեղեցի չկայ, այլ բազում, Կաթոլիկ, Բողոքական, Հրէական եւլն. եւ այդ պաշտօնեայն ամենուն պետութեան հետ ունենալիք անհշուտեանց անօրէնն է, եւ աշխարհականէ զատ մէկը չէր կրնար ըլլալ իբրեւ Տէրութեան ներկայացուցիչն : Իսկ թէ ինչպէս ինչ նշ Եւրոպական Տէրութեանց մէջ

Պետութիւնն կը կարգէ Եպիսկոպոսներն, այդ զիջողութիւն մ'է, որ զնկողութեանն շնորհիւ ստացուած է Պապէն:

Դիտել տուի նաեւ անցեալ նիստին Եկեղեցւոյ մէջ գտնուած դասակարգութիւնն, եւ երբ այս ծրագրին մէջ կը տեսնենք թէ կրօնական Խորհրդականը թաղերու քարոզիչները պիտի առաջարկէ, ՚ի բացակայութեան Պատրիարքին՝ կրօնային Ատենին պիտի նախագահէ, Եկեղեցեաց եւ Եկեղեցականաց բարեկարգութեան պիտի հսկէ, ալ ինչպէս կարելի է որ այսպիսի հեղինակութեան տէր պաշտօնեայ մը՝ Վարդապետ մը կամ Քահանայ մը լինի, առանց դասակարգութիւնն եղծելու, եւ հետեւաբար Եկեղեցական մարմնոց կազմակերպութիւնը վեր ՚ի վայր շրջելու:

Ուստի բանաւոր եւ օրինաւոր կը գտնեմ որ կրօնական Խորհրդականն Եպիսկոպոս մը լինի:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Երկու կէտի բաժնեցին 19րդ. յօդուածին վրայ յուշուած խնդիրը, մին էր կրօնական Խորհրդականին պատասխանատուութեան կամ իրաւասութեան մասն. իսկ միւսն էր անոր Եպիսկոպոսական աստիճանի խնդիրն: Ես այս վերջին կէտին վրայ չպիտի խօսիմ, այլ պատասխանատուութեան խնդիրը ձեռք առնելով պիտի ըսեմ թէ անկարելի պիտի լինի այդ 19րդ յօդուածը համաձայնեցնել մեր Սահմանադրութեան հետ, եւ ազատիլ այն կնճիռներէն, որ պիտի ծագին պատասխանատուութեան կէտին մէջ:

Կրօնական Խորհրդականը Սրբազան Պատրիարքէն զատ մարմնոյ մը պատասխանատու պիտի լինի. ըստ 14րդ յօդուածոյ ծրագրին՝ բոլոր Խորհրդականք անհատաբար, եւ ամէնքը մէկէն հաւաքաբար պատասխանատու են առ Ազգ. Ժողովն. հետեւապէս կրօնական Խորհրդականին բոլոր անօրէնութիւններն՝ Ազգ. Ժողովին պիտի հաղորդուին, որ մենք անոնց վրայ մեր կարծիքը յայտնենք, ընդունինք կամ մերժենք, Ասկէ զատ՝ ըստ ծրագրի երբ Պատրիարքը Խորհրդականի մը հետ անհամաձայն գտնուի, խնդիրը Վարչական Խորհրդին պի-

տի ներկայէ. իսկ երբ Վարչական Խորհրդին հետ անհամաձայն գտնուի՝ Ազգ. Ժողովոյ վճռոյն պիտի դիմէ. ըսել է կրօնական Խորհրդականն երբ Պատրիարքին հետ անհամաձայն գտնուի, Վարչական Խորհուրդն պիտի միջամուխ լինի, եւ խնդիրը վճռէ. իսկ մը չփոթութիւններ ալ ասկէ պիտի ծնին:

Վերջապէս այս պարագաները ապագային մէջ շատ մը կնճիռներ յառաջ կը բերեն, շատ մը ժամեր մեզ դռնէ կուտան, եւ անել լայիւր լինթոսի մէջ կը թողուն զմեզ: Այսօրու ընդ ազատելու համար այսպիսի վիճակէ մը, ես կառաջարկեմ Սրբազան Պատրիարքին կամայ թողուլ որ կրօնական գործոց համար՝ եթէ կուզէ՝ Խորհրդական մ'ընտրէ, առ ինքն պատասխանատու. իսկ եթէ հարկ չտեսներ, ինք վարէ գործերն իւր պատասխանատուութեամբ:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Զեր առաջարկութեան իմաստը սա էր կարծեմ որ, ծրագրին մէջ կրօնական Խորհրդականին պաշտաման եւ ընտրութեան վերաբերեալ բացարձակ տրամադրութիւն մը չդրուի, այլ բոլորովին Պատրիարքին ազատ կամացը թողուի այս կէտն:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Այո, ճիշդ այդպէս:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ ազէկ: Բայց ուրիշ կէտ մը կայ, որու վրայ եղած զիտուութիւններն ճշդուելու պէտք ունին:

Այն շփոթութիւնը, զոր Քարազաշեան էֆէնտին նշմարել կարծեց, Պատրիարքին եւ կրօնական Խորհրդականին միջև անհամաձայնութեան նիւթ եղող կրօնական խնդիրներու նկատմամբ, չկրնար տեղի ունենալ այնպէս, ինչպէս ինք կը կասկածի: Երբ զուտ կրօնական խնդրոյ մը վրայ է անհամաձայնութիւնն, ըստ ծրագրի նախ կրօնային Ատենին որոշման զայն ենթարկել պէտք կը լինի, եւ եթէ այս Ատենն չկարենայ լուծել, վիճակային Ժողովին, եւ երբ այս Ժողովն ալ իւր ձեռքն հասութեանէն վեր գտնէ խնդիրն, Արաբատեան Մայր Աթոռոյն կը մնայ անոր լուծումն: Իսկ երբ խնդիրը կրօնական չլինի, այն ատեն

Ազգ. Ժողովին կուգայ, եւ հոս գալով ոչ անունական եւ ոչ մեր Ազգ. Սահմանադրութեան հակառակ գործողութիւն մը կատարուած կը լինի: Ուստի այդ գուշակուած շփոթութիւնները չեն կրնար իրանալ, եւ կնճիռներ յարուցանել:

ԽՕԼՏԱՄԵԱՆ Տ. Պ. ՎՐԴՊՏ. — Երեւոթիսանի եւ խղճի պարտաւորութիւն մը միանգամայն պիտի կատարեմ: Ինչ առաջարկ կամ բարեփոխում որ Տ. Մատթէոս Եպիսկոպոս ներկայեց Ժողովին՝ կընդունիմ, միայն չեմ ընդունիր այն կէտն, որ կրօնական Խորհրդականին Պատրիարքէն ընտրութիւնը կը տրամադրէ, բայց զայնուրիշի պատասխանատու կը կարգէ: Ես այս ձեւը չկրցի համաձայնեցընել Եկեղեցական կանոնաց, զի կը տեսնեմ որ այս եղանակաւ Եկեղեցական կառավարութիւնն երկու Եպիսկոպոսի կը յանձնուի, եւ պաշտօնէական զրութեան կը դոճուի: Այսպիսի կարգադրութիւն մ'Եկեղեցական ո՞ր օրէնք կը ներէ, ե՞րբ արդեօք եղած եւ ո՞ւր դրուած է, չկրցի դտնել. եւ յաւէտ չպիտի կարենամ գտնել:

Պէտք է գիտնալ թէ ազգ մը կարող է իւր քաղաքական կառավարութեան ձեւը փոփոխել ըստ հաճոյս, երբ որ ուզէ, զի քաղաքական իշխանութիւնն իւր արեան գինն է. բայց այս հոգեւոր կառավարութեան համար ո՞վ էր արեւն թափողը. Գողգոթային վրայ Աստուած եւ ժարդ մը թափեց, եւ անոր արեամբը հաստատուեցաւ Եկեղեցին. ուստի անոր կառավարութեան ձեւն նախնական ինչ որ է, պէտք է մնայ նոյն եւ անյելլի:

Ի՞նչպէս հաստատեց իրաչեալն Քրիստոս Եկեղեցւոյ կառավարութիւնն, Ժողովիս մէջ երկու Եպիսկոպոսներ կան, կը հարցնեմ իրենց թէ երբ Կաթողիկոսը զիրենք ձեռնադրեց, ցուցո՞ւց արդեօք այն ձեւն, զոր այժմ հաստատել կուզեն: Միթէ ըսա՞ւ իրենց, որ Եկեղեցւոյ գործերը վարեն Խորհրդականի մը ձեռք, որ իրենցմէ ընտրուի, բայց ուրիշին պատասխանատու լինի: Եւ միթէ այսպիսի բան մը նոյն իսկ Ս. Աւետարանի սկզբանց . . .

(Գժգոհութեան ցոյցեր Ատենախօսին դէմ)

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով զատենախօսն) Դուք իրր երեւոթիսան՝ աղատ էք այս բեմին վրայ ձեր կարծիքները յայտնել, բայց խնդրեմ որ զգուշանաք այնպիսի յայտարարութիւններ ընելէ՝ որ Ժողովին զգացումները յուզեն եւ զժգոհութիւնը դրդեն: Եկեղեցւոյ գրութիւնը կամ Ս. Աւետարանի պատուիրանները փոփոխելու խնդիր չկայ հոս, Ազգային Ժողովն որ առաջին պաշտպանն է Եկեղեցւոյ, ազգին վարչական կազմակերպութեան ձեւն է որ կը վերաքննէ, եւ այս սահմանէն դուրս ինչ որ խօսուի, անտեղի է, եւ Ժողովը չկրնար հանդուրժել անոնց: Եթէ շարունակէք այդ ոճով, կը ցաւիմ որ պիտի ըստիպուիմ խօսքը զլանալ ձեզ: Ուստի կը խընդրեմ որ ՚ի խնդիր դառնաք:

Դիտեցէք որ խնդիրը պարզապէս վարչական հանգամանք ունի, եւ Եկեղեցւոյ օրինաց ու Ս. Աւետարանի սկզբանց զեղծում նշմարելու տեղի չկայ բնաւին: Թերեւս նոյն իսկ դուք՝ իրր Պատրիարքական փոխանորդ՝ Զեր պաշտօնին իրաւասութեան ենթարկեալ վարչական խնդրոց մէջ ունեցած եւ տնօրինած էք շատ անգամ այնպիսի գործեր, որ չեն կրնար համաձայնիլ այն սկզբան, որու ջատագով կը կանգնիք:

ԽՕԼՏԱՄԵԱՆ Տ. Պ. ՎՐԴՊՏ. — (Շարունակելով) Ի սկզբանէ անտի Եկեղեցւոյ կառավարութիւնն այնպէս է՝ որ մի թեմի մէջ մի Եպիսկոպոս կը վարէ միայն գործերն, Եկեղեցական Ժողովներով հաստատեալ կանոններու համաձայն: Իսկ երբ մոլորութիւն մը ծագում առնու, կամ անկարգութիւնք տեղի ունենան, այն ատեն Եպիսկոպոսն Եկեղեցական Ժողովներ կը դուրսարէ, եւ անոնց Խորհուրդն առնելով զարժանն կը տնօրինէ: Հետեւապէս կարելի չէ երբէք որ Պատրիարքն իւր կողմէ մէկն ընտրէ՝ կրօնական գործերը վարելու համար, եւ նա՝ չէ թէ առ ինքն, այլ առ Ազգ. Ժողովն պատասխանատու լինելով գործէ: Այսպիսի ձեւի մ'օրինակն երբէք չկայ Ե-

կեղեցւոյ օրինաց մէջ, եւ մեր ձեռքը մնացած ամենէն պատուական աւանդն մեր Եկեղեցին եւ մեր կրօնական վարչութիւնն է :

Արդ՝ այն նոր դրութիւնն, զոր կուզենք ընդունիլ, համաձայնեցնելու համար Եկեղեցական օրինաց, սա կրնայ լինիլ՝ որ Պատրիարքն ինչպէս ուրիշ Խորհրդականներ պիտի ընտրէ, կրօնական գործոց համար ալ ընտրէ մի Խորհրդական, բայց նա իւր գործոց համար պատասխանատու մնայ առ Պատրիարքն եւ ոչ թէ առ այլ ոք : Իսկ Պատրիարքն լինի պատասխանատու իւր գործոց համար առ որ անկէ : Այս է սոյն կէտին վրայ իմ կարծիքս եւ պէտք է ըսեմ զայն ազատարեան :

Իսկ գալով այն կէտին թէ Խորհրդականն Եպիսկոպոս մը պէտք է լինի թէ ոչ, իմ մըշտնջենաւոր կարծիքս այն է՝ որ անպատճառ Եպիսկոպոսաց դասէն կրնայ լինիլ : Ինչո՞ւ Պատրիարքն Եպիսկոպոս մը կը լինի : Վասն զի պէտք է ունենայ միւս Եկեղեցական դասակարգութեանց աստիճաններն, որ կարենայ կառավարել զամէնքն : Բայց Վարդապետ կամ Քահանայ չեն կրնար ունենալ այդ աստիճաններն, ուստի պատշաճութիւնն եւս կը պահանջէ որ Խորհրդականն Եպիսկոպոս մը լինի :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Տեղեկարեր)

Իմ խօսքս կարի համառօտ պիտի լինի. Եկեղեցական երեսփոխանք 19րդ յօդուածին վրայ համաձայնեցան եւ իրենց համաձայնութեան արդիւնքը ժողովին հաղորդեցին : Տ. Պօղոս վարդապետ թէ եւ ինքն ալ համամիտ է անոնց, բայց կը դատուի մէկ կէտի, այն է կրօնական Խորհրդականին առ Ազգ. ժողովն պատասխանատուութեան խնդրոյն մէջ : Ազատ է իւր կարծիքն եւ կրնայ հակառակ լինիլ այս տրամադրութեան, ասոր համար իրեն դէմ ըսելիք մը չունիմ, բայց այնպիսի կրօնական երեւոյթ մը կուտայ խնդրոյն, եւ այնպիսի սկզբունքներով զայն դատել կուզէ, որ ուզէ՞մ իբր տեղեկարեր՝ չեմ կարող լուել, եւ կը պարտաւորիմ յայտնել թէ ինչ որ Տ. Պօղոս վարդապետ Եկեղեցւոյ հակառակ կը դատէ, ոչ միայն հակառակ չէ, այլ եւ բնաւ Եկեղեցւոյ կանոնաց հետ վերաբերութիւն չու-

նի. ուստի անտեղի են իւր խօսքերն եւ սարգապէս թիւրիմացութեան արդիւնք :

Եւ ի՞նչ է եղեր Եկեղեցւոյ դրութեան հակառակ կէտն, որու համար այնքան երկիւղով կը համակուի Տ. Պօղոս վարդապետ, ոչ այլ ինչ, այլ սա միայն, թէ Կրօնական Խորհրդականն առ Ազգ. ժողովն պատասխանատու է եղեր : Թող հանդարտի ուրեմն Տ. Պօղոս վարդապետ եւ փարատէ սրտէն երկիւղը, վասն զի Խորհրդականն ոչ թէ միայն Ազգ. ժողովին, այլ նաեւ Պատրիարքին պատասխանատու է :

ԽՕԼՏԱՄԵԱՆ Տ. Պ. ՎՐԻՊՏ. (Ընդմիջելով) Բայց այսպիսի բան մը չտեսայ ես ծրագրին մէջ :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Շարունակելով)

Պիտի մեկնեմ այժմ : Ամեն Խորհրդական պարտաւոր է իւր տնօրինութիւնները Պատրիարքին հաղորդել, եւ անոր հաճութիւնն ստանալ, որ կարելի լինի գործադրել : Եթէ Պատրիարքը հաւան չգտնուի, այդ տնօրէնութիւնը չգործադրուի, իսկ եթէ Խորհրդականը պնդէ եւ Պատրիարքը մերժէ, ի՞նչ կը լինի հետեւանքն, եթէ ոչ Խորհրդականին հրաժեշտը : Եւ այս այնքան բնական է պաշտօնէական դրութեան մէջ որ գրելու եւ բացատրելու անգամ հարկ չկայ : Ահաւասիկ այս կերպով ոչ թէ Խորհրդականն իւր գործոց համար պատասխանատու կը լինի առ Պատրիարքն, այլ առանց անոր հաճութեան ոչինչ չկրնար գործել : Իսկ Խորհրդականաց Ազգային ժողովոյ առջեւ պատասխանատուութիւնն այնպիսի էական կէտ մ'է, զոր երբէք չենք կարող զոհել : Եւ միթէ ցարդ Կրօնական եւ Քաղաքական ժողովները պատասխասատու չէ՞ին Ազգային ժողովոյ, որ այժմ այդ Խորհրդականք զերծ լինին պատասխանատուութենէ :

Կը մնայ Խորհրդականին Եպիսկոպոսական աստիճանի խնդիրն : Եկեղեցականք այս մասին համաձայն են, իսկ Պալեօղեան եւ Քաթապահեան էֆէնդիաներն կը պնդեն որ Եկեղեցականաց դասէն լինի Խորհրդականը : Այս կէտին վրայ անցեալ նիստին պէտք եղածն ըսի արդէն, Ատենապետաց դիւանը պատշաճ դա-

տած է որ Եպիսկոպոսի մը յանձնուի այդ պաշտօնը, բայց եթէ ժողովը փոփոխութիւն մը ընել կուզէ, իւր գիտնալիք բանն է :

Արդ՝ ես իբր տեղեկարեր՝ որ եւ է դիտողութիւն չունիմ 19րդ յօդուածին վրայ Տ. Մատթէոս Եպիսկոպոսի առաջարկած բարեփոխմանց դէմ, եւ խնդիրն արդէն պարզուած համարելով վիճաբանութեան փակումը կառաջարկեմ :

ԱՍՅՆԵՐ՝ ԱՄԵՆՈՒՍՏ. — Քուէ՛, քուէ՛ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճաբանութիւնը փակելու մասին ժողովին կամքը պիտի հարցնեմ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Եկեղեցականի մը կողմէ յայտարարուեցաւ թէ կրօնական Խորհրդականին առ Ազգային ժողովն պատասխանատուութիւնն Եկեղեցական դրութեան հակառակ է, եւ հարցում մ'եղաւ մեզ այս մասին : Պէտք է պատասխանենք որ չըսուի թէ հասցեւորով որոշում մը տրուած է. ուստի խօսք կուզեմ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տակաւին ուրիշ խօսք ուղղոյնք ալ կան ձենէ առաջ, բայց վասն զի տեղեկարերն վիճաբանութեան փակումը կառաջարկէ, եւ շատերը քուէ կը խնդրեն, պէտք է ըստ կանոնի ժողովին կամքը խընդրեմ : Եթէ ժողովն վիճաբանութիւնը բաւական չհամարի կը շարունակենք զայն :

Հետեւապէս Ատենապետ էֆէնդիան խընդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը մեծագոյն մասամբ վիճաբանութեան փակումը կՈՐՈՇԷ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը վիճաբանութեան փակումը որոշեց, եւ ժամ է արդ բուն իսկ խնդրոյն վրայ իւր որոշումը խնդրելու :

Ծրագրին այս 19րդ յօդուածն ի սկզբան Եկեղեցական երեսփոխանաց կողմէ դիտողութեան ներքեւ ինկաւ, եւ դիտաւոր առարկութիւնն սա եղաւ թէ Եպիսկոպոսի աստիճանաւ Խորհրդականի մ'ընտրութիւնը չէր

համաձայնեց Եկեղեցւոյ կառավարական դրութեան : Թէ ի՞նչ կերպով հարկ է այդ յօդուածը բարեփոխել, համաձայնած են այժմ Եկեղեցական երեսփոխանք իրենց մէջ : Կրնա՞ր ըսել որ կրօնական Խորհրդականն Եպիսկոպոսի աստիճանն ունենայ, բայց ոչ թէ միայն Պօլիս գտնուող, այլ վիճակաւոր Եպիսկոպոսներէն մին ալ կարենայ լինիլ. ասկէ զատ՝ Խորհրդականին պաշտօնին հետ լծորդուած քանի մը գործեր կրօնային ատեանին կը վերադրեն. իսկ Խորհրդականին կը վերընծայեն Եկեղեցական մատենից տպագրութիւնն արտօնելու գործն, եւ այս բարեփոխմանց համաձայն քանի մը պարբերութիւններ 19րդ յօդուածէն 41րդը կը փոխադրեն, կը սրբագրեն եւ յուսկ յետոյ 41րդ. յօդուածին ներքեւ իբրեւ 42րդ ուրիշ նոր յօդուած մ'ալ կը յաւելուեն, որ կրօնային ատեանին գումարման վերաբերող տրամադրութիւն մը կը պարունակէ : Միանգամայն՝ զաւառաց մէջ կատարելի ձեռնադրութեանց վերաբերող տրամադրութիւն մ'ալ մը կը յաւելուեն ծրագրին 42րդ յօդուածին մէջ, որ ըստ իրենց առաջարկութեան 43րդ պիտի լինի :

Ընդդիմախօսներ կան սակայն : Եկեղեցականներէն Տ. Պօղոս վարդապետ խօստամեան կընդունի այս ամէնն, բայց կը պահանջէ որ Խորհրդականն փոխանակ առ Ազգ. ժողովն պատասխանատու լինելու, առ Պատրիարքն պատասխանատու ըլլայ : Նոյնպէս Տ. Վահան վարդապետ կը յարի Եկեղեցականաց համաձայնութեան, բայց սա տարբերութեամբ որ Խորհրդականի պաշտօնը միայն վիճակաւոր Եպիսկոպոսաց յանձնուի. Իսկ Քարազաչեան էֆէնդիան Խորհրդականին առ Ազգ. ժողովն պատասխանատուութեան կէտն քննելով՝ կնճիտներու հանդոյց մը կը նշմարէ, եւ կառաջարկէ՝ դժուարութեանց իբր ելք՝ Պատրիարքին կամաց թողուլ՝ որ կամ ուղղակի առ ինքն պատասխանատու Խորհրդականի մը միջոցաւ կամ ինք անձամբ վարէ կրօնական գործերն, ինչպէս որ ուզէ, եւ վերջապէս այս մասին կանոնին մէջ բացարձակ տրամադրութիւն մը չը գտնուի : Իսկ Պալեօղեան եւ Քաթապահեան էֆէնդիաներն իրարու համամիտ՝ կառաջարկեն

որ փոխանակ այնպէս կանոնադրելու որ կրօնական Խորհրդականն անպատճառ Եպիսկոպոսի աստիճան ունենայ, տրամադրուի որ եկեղեցական մը լինի. որպէս զի Վարդապետն եւ Քահանայն՝ երբ արժանիք ունին՝ անխտիր բարձրանան այս պաշտօնին: Այս գաղափարին դէմ՝ Տ. Պօղոս եւ Տ. Վահան վարդապետներն՝ եւ Պէրպէրեան էֆէնտի՝ կը պաշտպանեն Խորհրդականին Եպիսկոպոսաց դասէն ըլլալու հարկը:

Այս բազմադան առաջարկութեանց մէջ կը տեսնենք որ խնդրոյն հիմը սա է նախ՝ թէ կրօնական Խորհրդականին պաշտօնն Եպիսկոպոսի մը պէտք է յանձնուի, թէ անխտիր ամէն Եկեղեցականի, ահաւաստիկ ուրեմն քուէարկելի առաջին կէտ: Երկրորդ՝ կը մնայ սա կէտը թէ Պօլիս գտնուող թէ ոչ վիճակաւոր Եպիսկոպոսաց յանձնելի է պաշտօնն: Ահաւաստիկ այս ալ քուէարկելի երկրորդ կէտ: Այնուհետեւ կարգը կուզայ միւս բարեփոխումներուն:

Այս է ահաւաստիկ խնդրոյն դրութիւնն, որու նկատմամբ եթէ զխտողութիւնն չկայ, Դիւանը պիտի սկսի քուէի դնել:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Կանոնը կը պահանջէ նախ բարեփոխումները քուէի դնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ իրաւացի է ձեր զխտողութիւնն, բայց ներկայ պարագային համար չէ այդ կանոնին կիրառութիւնն: Խնդիրը ճշաւոր բնութիւն մ'ստացաւ վիճաբանութեամբ, եւ եթէ այս վիճակին մէջ բարեփոխմանց նախադատութիւն տանք քուէարկելու համար, ուղղութիւնը կը կորսնցունենք եւ շփոթութեան մէջ կ'իյնանք: Մանաւանդ որ ձեզ ներկայած ամփոփումս, եթէ չկեմ սըխալիր, յայտնուած կարծեաց զամենն ալ կը դժնայնէ:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Կը համաձայնիմ:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Կարծեմ թէ ամենէն առաջ քուէարկելի կէտը Գարագաշեան

էֆէնտիի առաջարկած բարեփոխումն է: Այս բարեփոխումը բուն իսկ խնդրոյն հիման վերայ է, վասն զի կը պահանջէ Պատրիարքին ազատ կամաց թողուլ որ կամ Խորհրդականի մը ձեռք, կամ ուղղակի ինք վարէ կրօնական գործերն, ինչպէս ուղէ: Այս բարեփոխումն բոլորովին կրնայ կերպարանափոխել 19րդ յօդուածին էութիւնը, եթէ ընդունուի ժողովն, ուստի կարծեմ թէ ամենէն առաջ այս մասին պէտք է ժողովին կարծիքը խնդրել:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Բայց պէտք չէ մտնալ որ ժողովը ծրագրին Տրդ յօդուածը քուէարկելով՝ ընդունած է արդէն սկզբամբ կրօնական գործոց Խորհրդականի մ'անուանումն:

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստուգիւ Գարագաշեան էֆէնտիի առաջարկած բարեփոխումը մասամբ արդէն ընդունուած սկզբունքի մը վրայ է, վասն զի կրօնական Խորհրդականի պաշտօնէութիւնը սահմանելու դէմ ըրած դիտողութիւնը 19րդ յօդուածին չվերաբերիր, այլ Տրդ յօդուածին, զոր քուէարկած է արդէն ժողովը. իսկ պատասխանատուութեան կէտին նկատմամբ յայտնած կարծիքը նոյնն է, ինչ որ է Տ. Պօղոս եւ Տ. Վահան վարդապետներու կարծիքը: Այս կրկին զխտողութիւններն իրարու լծորդուած լինելուն համար է որ պատճառ տուին շփոթութեան: Ուստի կը հարցնեմ Գարագաշեան էֆէնտիի թէ իւր առաջարկին խմատն ասկէ տարբեր՝ կը կարծէ եւ կը սինդէ՞ արդեօք անոր վրայ:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Կը բարեփոխեմ առաջարկս եւ կը պնդեմ: Քանի որ կրօնական Խորհրդականի մ'անուանումն արդէն ընդունուած է սկզբամբ, այս կէտին վրայ խնդիր չունիմ, եւ Խորհրդականը միայն առ Պատրիարքն պատասխանատու կարգելու առաջարկս կը կրկնեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գարագաշեան էֆէնտին իւր առաջարկն այսպէս բարեփոխելով յարեցաւ Տ. Պօղոս վարդապետի, հետեւաբար կը մնայ Դիւանին ամփոփման համաձայն խնդրոյն պրութիւնը՝ նոյն ինչ որ էր Ուստի քուէի պիտի դնեմ այժմ խնդիրը:

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ. — Հայաստանեայց եկեղեցւոյ որդիք էք դուք, եւ մտածեցէք որ Եկեղեցին շնորհք Քահանայի մ'Եպիսկոպոսի պաշտօն վարել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ խօսք ունէիք այդ ամենն ըսիք արդէն, հիմա քուէի ժամ է եւ ներելի չէ այլ եւս խնդրոյն վրայ խօսիլ:

Արդ՝ քուէի կը դնեմ սա խնդիրը թէ կրօնական գործոց Խորհրդականի պաշտօնն Եպիսկոպոսի պէտք է յանձնուի, եթէ ոչ՝ անխտիր ամեն Եկեղեցականի:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին սոյն բանաձեւով քուէի կը դնէ խնդիրն, եւ ժողովըն Յ քուէի ընդգէմ՝ 30 քուէով ԿՈՐՈՇԷ որ կրօնական գործոց Խորհրդականն Եպիսկոպոսաց դասէն լինի, ըստ սկզբան 19րդ յօդուածոց ծրագրին:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Արձանագրեցէք թէ Խորհրդականն եկեղեցական դասէն ըլլալու համար քուէ առի:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Արձանագրեցէք այդպէս եւ իմ անունս:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Արձանագրեցէք զիս ալ որ քուէ տուի Խորհրդականն Եպիսկոպոս մ'ըլլալու համար:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Արձանագրեցէք նոյնպէս եւ զիս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւաստիկ ժողովը հաստատեց կրօնական Խորհրդականին Եպիսկոպոս մը լինելու պայմանն, որ 19րդ յօդուածին է-

ական կէտն էր: Հիմա կարգն եկաւ այն բարեփոխմանց, զոր եկեղեցական հարք կառաջարկեն նոյն յօդուածին նկատմամբ, խմբագրելով զայն սապէս:

« Յօդ. 13. Կրօնական Խորհրդականին պաշտօնն է ազգին կրօնական գործոց տեսչութիւնը: Իւր պարտաւորութիւնքն են՝ Եկեղեցական պաշտամանց, ընթերցուածոց եւ երգեցողութեանց կանոնաւորութեան, ինչպէս նաեւ ազգին վարժարանաց եւ ընծայարանաց մէջ Քրիստոնէական կրօնի ուսուցման հսկել: Կրօնագիտութեան եւ երգեցողութեան դասատուներն ու դասադրքերն որոշել եւ արտօնել, նոյնպէս Եկեղեցական գրեանց տպագրութիւնն արտօնել, ուսեալ եւ արժանաւոր եկեղեցականներ հասցնելու, Եկեղեցականաց վիճակը բարւոքելու, եւ անոնց ապագայն ապահովելու հոգ տանիլ:

« Կրօնական Խորհրդականը Պօլիս գտնուող կամ վիճակաւոր Եպիսկոպոսներէն մին կը լինի. եթէ վիճակաւորներէն մին լինի ընտրեալը, իւր վիճակը փոխանորդով մը կը կառավարէ ցրումն իւր պաշտօնավարութեան: »

Սոյն բարեփոխեալ յօդուածը ծրագրին յօդուածին հետ բաղդատելով կը տեսնենք որ, Ա. Ծրագրի յօդուածին աս պարբերութեան մէջէն « Կրօնական Խորհրդականին պաշտօնն է՝ Ազգին կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնն: » Ընդհանուր բառը դժած են եւ այդ հանգամանքը կրօնային ատենանին պաշտաման սահմանած են:

Բ. Ծրագրի յօդուածը Խորհրդականին պարտաւորութիւն վերագրած էր, « Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անեղծ պահել տալ, կրօնական ըզգացումն ազգին մէջ զարգացնելու ջանալ, Եկեղեցաց եւ Եկեղեցականաց բարեկարգութեան հսկել: Բարեփոխեալ յօդուածին մէջ այս կէտերը վերցուած եւ 41րդ յօդուածին մէջ՝ այսինքն՝ կրօնային Ատենան պարտաւորութեանց կարգն անցած են:

Գ. Ըստ բարեփոխեալ յօդուածի Խորհրդականին պարտաւորութեանց կարգն անցած է « Եկեղեցական գրեանց տպագրութիւնն արտօնել, կէտ մը՝ որ չկայ ծրագրի յօդուածին:

մէջ եւ զոր Տ. Մկրտչան հայր առաջարկեց նախընթաց նիստին :

Գ. Մրազրի յօդուածին վերջին հատուածին տեղ , որ է « Կրօնական Խորհրդականն Եպիսկոպոս մը լինի » կանցընեն ուրիշ հատուած մ'ինչպէս լսեցիք արդէն , սատէս « Կրօնական Խորհրդականն Պօլիս գանուող կամ վիճակաւոր Եպիսկոպոսներէն մին կը լինի եւլն :

Այս հատուածին դէմ Տ. Վահան Վարդապետ զխտողութիւն կընէ եւ կառաջարկէ որ Խորհրդականն վիճակաւոր Եպիսկոպոս մը լինի :

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ. — Ես ետ կանուում առաջարկս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն քուէի կը դընեմ այժմ Եկեղեցական հարց կողմէ՝ փոխան ծրագրին 19րդ յօդուածին՝ առաջարկուած բարեփոխեալ յօդուածը :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Եկեղեցական երեսփոխանաց կողմէ առաջարկուած յօդուածն , եւ ժողովը 29 քուէով ընդունելով զայն ԿԸ ՀԱՍՏԱՏԷ , փոխան 19րդ յօդուածոյ ծրագրին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ Եկեղեցական հարց կողմէ 41րդ յօդուածին վրայ առաջարկուած բարեփոխումն եւ 42րդ յօդուածի մը յաւելումն , ինչպէս նաեւ ծրագրի 42րդ յօդուածին երկրորդ պարբերութեան վերջը կըցելի հատուածն , որ այն ատեն նկատողութեան կրնան առնուիլ , երբ նոյն յօդուածոց կարգը գայ : Այժմ որ ժողովը քուէարկեց 19րդ յօդուածը , կը մնայ շարունակել ծրագրին ընթերցումն եւ քննութիւնն , ուստի խօսքըն Ատենադպիր էֆէնտինն է , 20րդ յօդուածէն սկսելու ծրագրին ընթերցումը :

Հետեւապէս Ատենադպիր էֆէնտին յօդուած առ յօդուած կսկսի ընթերցումը :

Յօդ. 20. Կրօնական Խորհրդականը կառաջարկէ Կ. Պօլսոյ Եկեղեցեաց Քաղաքիչներն ու Աւագ Քահանայներն , եւ Պատրիարքը կանուանէ զանոնք :

Սոյն յօդուածին վրայ որ եւ է զխտողութիւն տեղի չունենար եւ ժողովը կանցնի յաջորդ յօդուածին :

Յարաբերական Խորհրդական

Յօդ. 21. Յարաբերական Խորհրդականին պաշտօնն է՝ Տէրութեան եւ ուրիշ ազգաց հետ յարաբերութեանց ընդհանուր տեսչութիւնը . յարաբերութիւնք՝ որք կը ծագին Ազգին առանձնաշնորհութիւններէն եւ աւանդական սովորութիւններէն : Իւր պարտաւորութիւնքն են՝ Ազգին իրաւունքն ու արտօնութիւններն անվրթաք պահելու ու արդիւնաւորելու աշխատիլ . եւ ըննել ու որոշել այն ամեն խընդիրներն , որք տէրութեան եւ ուրիշ ազգաց հետ բանակցութեան կը կարօտին :

Սոյն յօդուածին վրայ որ եւ է զխտողութիւն տեղի չունենար եւ ժողովը կանցնի յաջորդ յօդուածին :

Ներքին գործոց Խորհրդական

Յօդ. 22. Ներքին գործոց Խորհրդականին պաշտօնն է՝ առաջնորդական վիճակաց եւ Կ. Պօլսոյ թաղերուն հետ յարաբերութեանց ընդհանուր տեսչութիւնը : Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգային Սահմանադրութեան եւ օրինաց ամենուրեք գործադրութեան հոգ տանիլ . ներքին բարեկարգութեան հսկել . ազգայնոց նիւթական զարգացման միջոցներուն

բուն զբաղիլ . եւ քննել ու որոշել առաջնորդական վիճակներուն ու Կ. Պօլսոյ թաղերուն վերաբերեալ օրինական եւ վարչական խնդիրները :

Սոյն յօդուածին վրայ որ եւ է զխտողութիւն տեղի չունենար եւ ժողովը կանցնի յաջորդ յօդուածին :

Դատական Խորհրդական

Յօդ. 23. Դատական Խորհրդականին պաշտօնն է՝ ազգային դատական գործոց ընդհանուր տեսչութիւնը : Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգայնոց բողոքներուն եւ դատերուն օրինաւոր քննութեան եւ վճռոց ճշդիւ գործադրութեանն հսկել , Բ. Դռնէն եւ Պատրիարքէն յանձնարարեալ դատերը ձեռնհաս դատարանաց յղել , եւ ազգային դատական օրինաց ճշդիւ կիրառութիւնը պաշտպանել :

Սոյն յօդուածին վրայ որ եւ է զխտողութիւն տեղի չունենար եւ ժողովը կանցնի յաջորդ յօդուածին :

Կրթական Խորհրդական

Յօդ. 24. Կրթական Խորհրդականին պաշտօնն է՝ ազգային կրթութեան ընդհանուր տեսչութիւնը : Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգային կրթութիւնն ընդհանրացնելու եւ զարգացնելու միջոցները քաջալերել . ազգային վարժարանաց , ընծայարանաց եւ մատենադարանաց վրայ հսկել . մանկավարժներն ու դասատուներն արտօնել , անոնց կացութիւնը բարւոքելու , ապագայն ապահովելու եւ հետզհետէ լաւագոյններն հասցնելու հոգ տանիլ , ազգային վարժարանաց դասագրքերն որոշել , եւ ազգային կրթութեան

աշխատող անհատից եւ մարմնոց ուղղութեանն հսկել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն յօդուածին վրայ զխտողութիւն ընելու համար խօսք կը խնդրէ Պալեօղեան էֆէնտին , ուստի ըստ սահմանեալ եղանակի հարկ է որ այդ յօդուածը վիճարանութեան ենթարկելէ առաջ՝ քուէարկէ ժողովը նախորդ 20 , 21 , 22 եւ 23րդ յօդուածներն , որոց վրայ զխտողութիւն չեղաւ :

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ ծրագրին 20 , 21 , 22 եւ 23րդ յօդուածներն եւ ժողովը միաձայն ընդունելով զանոնք անփոփոխ՝ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Պալեօղեան էֆէնտինն է այժմ 24րդ յօդուածին վրայ իւր զխտողութիւնն ընելու համար :

ՊԱԼԵՕՂԵԱՆ Լ. ԷՖ. — Եթէ չեմ սխալիր , Ազգային վարչութիւնն իրաւունք ունի սահմանադրապէս հսկելու այն ընկերութեանց վերայ , որ ազգային վարժարանաց օգնելու նըստաւորեալ կը կազմուին : Կը տեսնեմ սակայն որ այս կէտն անտես եղած է 24րդ յօդուածին մէջ , ուստի կառաջարկեմ յաւելուլ զայն :

ԵՆՆՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Եստ ճիշդ է ըստ սկզբան Պալեօղեան էֆէնտինի զխտողութիւնն . սակայն 24րդ յօդուածն զանց ըրած չէ այդ կէտըն , եւ Կրթական Խորհրդականին պարտաւորութիւն վերագրած է « Ազգային կրթութեան աշխատող անհատից եւ մարմնոց ուղղութեանն հսկել » : Այս բառերով բացատրուած է ահաւասիկ ինչ որ կուղէ Պալեօղեան էֆէնտին ներմուծել այդ յօդուածին մէջ :

ՊԱԼԵՕՂԵԱՆ Լ. ԷՖ. — Պէտք է յայտարարեմ թէ 24րդ յօդուածին առթիւ այս զխտողութիւնն ընելով , փոքր սխալ մը գործեցի : Ես ոչ միայն հսկողութիւն կը պահանջեմ այդ ընկերութեանց ուղղութեան , այլ անոնց կըու-

մշտից վրայ, այս սլաշտօնը բնապէս Տնտեսական Խորհրդականին կը պատկանի, եւ յաջորդ 25րդ յօդուածին վրայ այս դիտողութիւնը կրնայ տեղի ունենալ: Ուստի կը վերապահեմ զայն նոյն յօդուածին:

ԵՆՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Կարծեմ որ-եթէ կրթական ընկերութեանց նկատմամբ որ եւ է հսկողութիւն տեղի պիտի ունենայ, աւելի կրթական Խորհրդականին պաշտօնին բընութեան յատուկ է այն՝ քան Տնտեսականին:

ՄԵԼԻՔԵԱՆ Դ. ԷՖ. — Քանի որ կարծիքներն համաձայն չեն թէ ո՞ր յօդուածին կը վերաբերի խնդրոյ նիւթը, կառաջարկեմ միւս յօդուածն ալ կարգալ, եւ այնպէս նկատողութեան առնուլ խնդրին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ աղէկ, կրնանք 25րդ յօդուածն ալ կարգալ:

Տնտեսական Խորհրդական

Յօդ. 25. Տնտեսական Խորհրդականին պաշտօնն է՝ Եկեղեցեաց, վարժարանաց, վանորէից եւ այլ ամենայն ազգային հաստատութեանց տնտեսական ընդհանուր տեսչութիւնը: Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգային սեփականութեանց անկորուստ պահպանութեան, նոցա պատկանեալ գոյից՝ կալուածոց եւ հասութից կանոնաւոր արձանագրութեան եւ պարբերական համարատուութեան եւ վազրֆաց ու կտակաց ճշդիւ գործադրութեան հսկել. Կ. Պօլսոյ մէջ շինութեանց, նորոգութեանց եւ գնմանց խընդիրները տնօրինել. իսկ ապառիկ գընմանց եւ վաճառմանց եւ փոխառութեանց վերաբերեալ խնդիրը՝ վարչական Խորհրդին կարծիքն ստանալով արտօնել. կեդրոնական սնտուկին ելուստաբը տըն:

տեսել, ըստ որոշեալ ելմտացոյցին. և ուղղակի կամ՝ անուղղակի արօց կանոնաւորապէս բաշխման ու հաւաքման հոգ տանիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ Պաշտօնական Էֆէնտին իւր դիտողութիւնն, զոր բրաւ 'ի սկզբան' 24րդ յօդուածին վրայ, 'ի վերջէ՛ այս յօդուածին վերապահեց, պատճառն այն է որ ոչ թէ ընկերութեանց բարոյական սեղութեան այլ նիւթական մասին վրայ վարչութեան հսկողութիւնը կուղէ տարածել: Ուստի այս կէտին վրայ է այժմ մեր խնդիրն:

ԵՆՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Չեմ կարծեր որ կարենանք վճռակի ըսել թէ Ազգային վարչութիւնը բացարձակ իրաւունք ունի հսկելու մասնաւոր ընկերութեանց ելմտական ընթացքին վրայ, վասն զի անոնք ազգին զբառնով զպրօցներ կը բանան եւ ազգին մանկտին կը կրթեն:

Հսկողութեան իրաւունք մը կրնայ երեւակայուիլ այդ ընկերութեանց կամ անհատներու նկատմամբ, բայց այս հսկողութիւնն անոնց բարոյական ուղղութեան եւ ընթացքին վրայ կը տարածուի: Չափազանցութիւն մը կը համարուի ինձ այս հսկողութիւնն աւելի հեռի մղել, եւ մինչեւ ելմտական գործառնութեանց վրայ տարածելով՝ երնկ ամեն տարի, ամեն ատեն անոնց հաշիւները քննել: Այս տեսակ միջամտութիւն մը վարչութեան կողմէ՛ այդ ընկերութեանց ազատութեանը կրնայ դպչել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես չեմ կրնար 'ի դիւանէ կարծիք յայտնել յօդուած խնդրոց վերայ, եւ վիճարանութեանց միջամտել, բայց այս խնդիրը նոյն իսկ Ատենապետաց դիւանին մէջ, որ այս ծրագիրը շինեց, եւ որու աշխատութեան ես ալ մասնակցեցայ, յօդուած լինելով հարկ կը համարիմ այս մասին տեղեկութիւն մը տալ, որ թերեւս լուսաւորէ ըզձեզ:

Ատենապետաց դիւանն եթէ կրթական Խորհրդականին պարտաւորութիւնն վերագրեց ազգային կրթութեան աշխատող անհատից եւ մարմնոց ուղղութեան վրայ հսկելու, իւր նըպատակէն բոլորովին հեռի էր միջամուխ լինել անոնց գործոց: Ազգին մէջ սոսկ մարմիններ կը կազմուէին, ուսում եւ կրթութիւն ծաւալելու նպատակաւ, եւ այդ անունով հանգանակութիւններ ու ձեռնարկութիւններ կընէին. բանաւոր եւ օգտակար չթուեցաւ բոլորովին վարչութեան դիտութեանն անյայտ թողուլ այս ընկերութեանց ընթացքն, որ յանուն ազգին կը գործեն, եւ տեղեկանալու համար թէ ի՞նչ ուղղութեամբ կընթանան, եւ անոնց ազգէն առած գրամը այս կերպով տեսակ մը բօնիքովի ներքեւ գնելու մտօք, այդ տրամադրութիւնն անցաւ 24րդ յօդուածին մէջ:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Սխալ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գոհ եմ որ սխալ նըշմարեցիք Ատենապետաց դիւանին տեսութեան մէջ, վասն զի ես ալ ճիշդ այն համոզմամբ թէ սխալ կամ ուղիղ ըլլալն որոշելու ձեռքնհաս էք, ձեր ուշադրութեան ներկայեցի այս պարագան:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Ես անբաւական կը գտնեմ ինչ որ գրուած է 24րդ յօդուածին մէջ այս կէտին վերաբերութեամբ: Իմ նըպատակս ազգային ընկերութեանց ոչ թէ ուղղութեան, այլ ելուստից վրայ ծանօթութիւն առնուլ է, եւ կը տեսնեմ որ նոյն ինքն տեղեկարբ էֆէնտին կը հաստատէ վարչութեան այդ իրաւունքն, երբ կըսէ թէ այդ ընկերութիւններն ազգին գրամով դպրոց կը հիմնեն, եւ մանկտին կը դաստիարակեն:

Ահաւասիկ ճիշդ այդ պատճառին համար Ազգային վարչութիւնն իրաւունք ունի հսկողութեան: Ինչպէս որ թաղերու մէջ Թաղական Խորհուրդներն ժողովրդէն զբաժ կը հաւաքեն, դպրոցները կը տնտեսեն եւ վարչութիւնն անոնց ելմտական գործոց վրայ կը հըս-

կէ, եւ համար կանոն, ճիշդ այնպէս ալ մասնաւոր ընկերութեանց վրայ, որ միեւնոյն բանը կընեն, վարչութիւնն իրաւունք ունի հսկելու: Իմ դիտողութիւնս հաստատուած եւ ոչ մի կը ընկերութեան կ'ակնարկէ, այլ միայն խնդրոյն սկզբունքին վրայ է:

Կրնայ պատահիլ որ օր մը 5-10 մարդիկ միարանին իրենց մէջ նենգամիտ Խորհրդով եւ ընկերութիւն մը կազմելով՝ կրթական նըպատակի համար խել մը գրամ հանգանակեն, բայց փոխանակ յօդուած ազգային կրթութեան կամ առաջադրեալ նպատակին գործածելու, իրենց շահուն գործածեն: Ուստի իմ դիտաւորութիւնս է միջոց մը սահմանել այսպիսի խաբէութեանց, որ անհուանական չեն, առաջքն առնելու համար: ուստի այս ընկերութեանց ուղղութեան եւ ընթացից հսկողութիւնն կրթական Խորհրդականին եւ ելուստից հսկողութիւնն Տնտեսական Խորհրդականին յանձնել պատշաճ կը դատիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես յոյժ բանաւոր կը գտնեմ Պաշտօնական Էֆէնտիի առաջարկն: Եթէ ծրագրին 24րդ յօդուածը կընդունի ազգային կրթութեան աշխատող մարմնոց ուղղութեանը վրայ հսկելու հարկն, եւ կրթական Խորհրդականին պարտաւորութիւն կը վերադրէ այս մասին, միեւնոյն հսկողութիւնը պէտք է նաեւ 'ի գործ գնել ելմտական մասին, զի անտրամաբանական պիտի լինէր մին հըսկողութեան ենթարկել եւ միւսն անկէ զերծ նկատել, քանի որ երկուքն իրարու յարակից են, մանաւանդ որ գրամը լինելով միջոց նըպատակին իրացման, նիւթական մասին լքումը կրնայ գործին վնասել: Միայն թէ կը մտածեմ որ հսկողութիւնն երկուքի բաժնէն եւ մին կրթական եւ միւսն Տնտեսական Խորհրդականին իրաւատութեան վերագրելը, կրնայ այդ մարմինները կաշկանդել, ուստի լաւագոյն կը համարիմ երկու կէտերուն ալ հսկողութիւնն միեւնոյն պաշտօնէին, այսինքն կրթական Խորհրդականին յանձնել:

ՊԻՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Խնդիրը լուծելու

համար պէտք է լաւ հասկնայ զայն, բայց Պալեօղեան էֆէնտի որոշ շնորհայնք : Եթէ ազգային ընկերութիւնք ըսելով կը հասկընայ ամէն ընկերութիւն որ կը կազմուի ազգին մէջ, ինչպէս կարելի է հսկողութեան տակ առնուլ շահադիտական, վաճառականական, թատերական եւն. ընկերութիւններն, եւ ինչ իրաւամբ . . .

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ազգին ծառայելու համար կազմուած ընկերութեանց համար է խօսքս :

ՊԵՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակելով) Շատ ազգէկ, ուրեմն անոնց վրայ խօսինք :

Ամէն անհատի իրաւունքն է որ եւ է նընդատակի համար միանալ մի ուրիշի հետ, եւ հետեւաբար շատեր կրնան միանալ իրարու հետ, ի միասին դէպի նպատակ մը քայլելու համար : Ոչ ոք կրնայ արդելու զայս, միայն երբ չար լինի միաբանողաց նպատակը : Արդ մեր ազգին մէջ ընկերութիւններ կազմուած են նպատակու համար ազգային յառաջադիմութեան, եւ անձնիւր անդամ կուտայ իւր լուծման : Բայց միթէ փոյթ չընէ՞ր հասկնալ թէ այդ ստակն ո՞ր կերթայ եւ ընդունայն կը վատնուի՞ արդեօք . անկարելի է այս : Ուստի եւ ամէն ընկերութիւն իւր օրինաւոր կազմութիւնն ունի, իւր հսկողութեան ու համարառութեան միջոցներն, իւր վարչական մարմինն ու ընդհանուր համարառութեան ժողովն, եւ այսպէս հաւաքուած գրամին գործածութիւնք քօնքօյի ենթարկուած է : Բայց երբ նենգութիւն մը գործուի գլխաւորներու կողմէ եւ կարելի չլինի հատուցում ստանալ ընկերութեանց համարառութեան միջոցներով, այն ատեն համարառութեան մարմինը դատաստակ կը կանգնի եւ կամբաստանէ նենգողն, եւ ահա հոն կսկսի ազգային իշխանութեան միջամտութեան իրաւունքն : Ասկէ դուրս իշխանութիւնն միայն վերին հսկողութիւն մ'ունի, իրեւ տեսուչ ներքին բարեկարգութեան եւ պահպանող հանրական շահերու : Այս է իւրն զիրն :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Շատ իրաւունքով կը խօսի Պալեօղեան էֆէնտին, երբ կը պահանջէ որ ընկերութեանց ելեւմտից վրայ հսկողութիւն կատարուի : Երբ ընկերութիւն մը կը կազմուի թէ կրթական եւ թէ ուրիշ ազգօգուտ նպատակի մը համար, եւ ազգէն դրամ հաւաքելով այդ նպատակը գործադրել կը խոստանայ, Ազգ. վարչութեան պարտքն է հսկել անոր ելեւմտից վրայ, ինչպէս կը հսկէ թաղ. խորհրդաց վրայ :

ՄԱՄԻՊԵՆԱՆ Մ. ԷՖ. — Ազգային վարչութիւնը բնաւ իրաւունք չունի ընկերութեանց եւ մասնաւոր վարժարանաց գործին միջամտելու . այս միջամտութիւնը կը կաշկանդէ եւ անգործութեան կը դատապարտէ ընկերութիւնները, որ գործել սկսած են, եւ թաղային վարժարանաց կարգը կիջեցնէ մասնաւոր վարժարաններն, որ արդիւնքներ սկըսած են յառաջ բերել : Եւ ո՞րքէ կը բղթի այս միջամտութեան իրաւունքն : Սխալ է ըսել թէ ազգին գրամովը հաստատուած ամեն ձեռնարկութեանց վարչութիւնը կը խառնուի :

Ամէն Հայու գրպանը գտնուած գրամն ազգային չէ, որ վարչութիւնն այդ գրամով կատարուած գործերուն միջամտէ, ազգային սնտուկներուն մէջ եղած գրամն է միայն ազգային եւ վարչութեան հսկողութիւնն անոնց գործածութեան վրայէ : Եթէ այդ ընկերութիւններն եւ վարժարաններն օր մը բաց ունենան, միթէ ազգային սնտուկը պիտի տուժէ, որ այժմէն վարչութիւնը հսկէ անոնց նիւթական եւ բարոյական ընթացքին վրայ :

Եթէ անպատճառ կուզուի որ հսկողութիւն մը տեղի ունենայ, կրնայ անոնց համար յատկապէս կանոնագիր մը շինուիլ եւ ընդունուելէ յետոյ գործադրուի :

ՄԷԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Ես ալ կընդունիմ Եւսուֆեան եւ Պէրպլեան էֆէնտիներու այն կարծիքը թէ վարչութիւնը ուղղակի միջամտելու չէ ընկերութեանց գործերուն, իրր ուրոյն եւ անկախ մարմիններ նկատելով զանոնք : Սակայն կարծեմ Պալեօղեան էֆէն-

տին ալ չպահանջեց որ անոնց գործերուն մանրամասնութեանը միջամտիս լինի վարչութիւնն, այլ՝ գրամաց գործածութեան ծանօթանալու հարկին վրայ պնդեց :

Զոր օրինակ . եթէ 10-15 հոգի միանան իրր ընկերութիւն, եւ ինչպատ շիւանդանոցի կամ ուրիշ որ եւ է ազգային նպատակի մը համար քանի մը հարիւր ոսկի հանդանակեն, եւ զայն առաջադրեալ նպատակին չգործածելով իրենց հաճոյից վատնեն, դարձեալ լուր պիտի կենայ վարչութիւնը : Եւսուֆեան էֆէնտին թէեւ Պալեօղեան էֆէնտի ստաջարկութեան դէմ խօսեցաւ, բայց բոլորովին չթխեց վարչութեան հսկողութեան իրաւունքն : Ազգէն հաւաքուած գրամներն ուրոյեալ նպատակին գործածել տալու համար, պէտք է վերջապէս հսկողութեան պէտքն ընդունիլ եւ գործադրութիւնն յանձնել վարչութեան : Զանազան նպատակներով կրնան կազմուիլ ընկերութիւններն, եւ նպատակին համաձայն՝ անոնց ուղղութեան հսկողութիւնը վարչութեան այլ եւ այլ ճիւղերուն կը վերաբերի իսկ գրամական մասն՝ Տնտեսականին :

ՓՅՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչ դիտողութիւն որ ըրաւ Մամիկոնեան էֆէնտին հսկողութեան կէտին նկատմամբ, կընդունիմ համամտօրէն : Ես այնպէս կը հաւատամ թէ ընկերութեանց գործերուն միջամտութիւնը զանոնք կը չքայրնէ . ասկէ քսան տարի առաջ ալ ընկերութիւններ կազմուեցան, բայց կապերով կաշկանդուած էին, ուստի չկրցան տեւական լինիլ եւ արդիւնաւորիլ : Այժմ ազգային կրթութեան աշխատող ընկերութիւններն, եթէ հաստատութիւն գտան եւ սկսան օգուտ յառաջ բերել, պատճառն այն եղաւ որ ազատութիւն եւ վատահոլութիւն գտան ազգին կողմէն : Այս կրկին տարերք սնուցին զանոնք եւ ազգին ծառայելու դիրքի մէջ գրին :

Մեր հսկողութեան կէտն երբէք այդ ընկերութեանց ելմտական գործերը չեն, վարչութիւնը իրաւունք չունի անոնց ըսելու, «Բացէք ձեր տուժարներն եւ ձեր արկղը, պիտի տեսնեմ թէ որքան դրամ ունիք» : Այդ ըն-

կերութիւնները վարժարաններ կը բանան եւ վարչութիւնը պիտի հսկէ թէ ազգային մանկըտին ազգային կրթութեամբ կը դաստիարակեն թէ ոչ, երբ տեսնէ թէ օտար դաստիարակութիւն մը կը տրուի, կը հրապարակէ զայն Ազգին եւ այն ատեն ինքնին գործը յառաջ չերթար : Ուստի արդէն ընկերութեանց օգուտն ալ կը պահանջէ որ այն կէտին ուշադրութիւն ընծայուի : Արդ՝ կառաջարկեմ ՉԿրդ յօդուածին սա պարբերութիւնն « Ազգային կրթութեան աշխատող անհատից եւ մարմնաց ուղղութեան հսկել » բարեփոխել սապէս, « Ազգային նընդատակի մ'աշխատող անհատից եւ ընկերութեանց վրայ հսկել, իրենց նպատակին գործադրութեան մասին » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս լսեցիք, Պալեօղեան էֆէնտին բաւական էջ համարիր ըստ ՉԿրդ յօդուածոյ ծրագրին՝ ազգային կրթութեան աշխատող անհատից եւ մարմնաց ուղղութեան վրայ միայն հսկել, այլ նաեւ կը պահանջէ որ վարչութիւնն իրեւ վերին իշխանութիւն՝ ծանօթութիւն ստանայ անոնց ելմտական վիճակին վրայ, առանց ներքին գործոց միջամտելու : Իսկ ուրիշներ կը պնդեն որ վարչութիւնն որ եւ է տեսակ հսկողութիւն մ'ընելու իրաւունք չունի անոր վրայ :

Բայց նախ պէտք է գիտնալ թէ հսկողութիւնը կարեւոր դատողներն որչափ ալ ընդարձակութիւն տալ ուզեն անոր, իրենց դիտողութիւնները բնաւ կասկած չեն ենթադրել կրթական ճիւղին դադող որ եւ է ընկերութեան կամ անհատի վրայ . անոնք կը պատեն հաստատութիւն անձանօթ չլինի Ազգ. վարչութեան, իւր ընթացից եւ վիճակի մասին : Այս ըսելէ թէ Ազգ. վարչութիւնը անոնց ընթացիկ գործոց միջամտիս լինի եւ այդ մասին հրահանգ տալու ելնէ . այլ միայն գիտնայ թէ ինչ է անոնց նպատակն, ինչ միջոցներով զայն ի գործ կը դնեն, եւ ինչ վիճակի մէջ կը գտնուին . ի մի բան կուզեն որ վարչութիւնը տեղեկութիւն ունենայ թէ այդ հաստատութիւններն կը գործադրեն հաւա-

տարմաբար իրենց յայտադիրն , որով ներկայացած են ազգին , դրամ եւ քաջալեր խընդրելու :

Այս սահմանին մէջ , կը տեսնէք որ , կասկածելու տեղի չկայ թէ Վարչութիւնն անոնց գործոց միջամտելով մի գուցէ էտպէ կաշկանդէ իրենց գործելու ազատութիւնն : Անոնք միշտ ազատ պիտի մնան գործելու , բայց Վարչութիւնն ալ գործադիր իշխանութիւն ազգին՝ պիտի զիտնայ թէ իրօք ազգօրո՞ւտ ընթացքի մէջ են անոնք , թէ չէ պարզամիտները կը պատրեն , խաբուսիկ երեւոյթով : Զոր օրինակ ահաւասիկ Պէրպլեւան էֆէնտին , որ իրեն սեպհական կրթական հաստատութիւն մ'ունի , ուր բազմաթիւ ազգայնոց զաւակներ կը դիմեն ուսում եւ դաստիարակութիւն ընդունելու , պէտք չէ որ ազգային Վարչութիւնը տեղեկանայ գիտնայ թէ այդ վարժարանին մէջ ազգային լեզու եւ պատմութիւն կուանդուի՞ այն կերպով , ինչպէս պէտք է աւանդել Հայ ազգայնոց , զիրենք իբր Հայ պատրաստելու համար : ազգային Վարչութիւնը պէտք չէ՞ գիտնայ թէ Պէրպլեւան էֆէնտին իւր վարժարանին մէջ կրօնադիտութեան դաս հաստատած է , իւր աշակերտներն Հայաստանեայց եկեղեցւոյ դասակ պատրաստելու համար , թէ ոչ : Ասկէց ի՞նչ արգելք կրնայ ծագիլ վարժարանին ընթացից , քանի անոր տէրն ազատ է այդ դասերն աւանդելու , կամ ոչ : Վարչութիւնը չը պիտի բռնադատէ զՊէրպլեւան էֆէնտին այսպէս կամ այնպէս ընելու , այս կամ այն ծրագրին հետեւելու . նա իւր ուզածը պիտի ընէ , Վարչութիւնն ալ տեղեկութիւն պիտի ունենայ անոր ըրածէն :

ՊԵՐՊԼԵՎԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդ միջնելով) Անտարակոյս ազգային Վարչութիւնը մինչև իսկ կարող է գիտողութիւն ընելու , բաւական է որ չմիջամտէ մասնաւոր սեպհականութեան մը վերաբերեալ գործոց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Արդ երբ անհատական սեպհականութեան մը համար այսպէս ըլլալ պէտք է , անտարակոյս աւելի եւս կարեւոր է այդ հսկողութիւնն ազ-

գային ընկերութեանց համար : Եւ ահա այս տեսութեամբ էր որ Ատենապետաց զիւանոր թէ կրթական հաստատութեանց եւ ազգային ընկերութեանց գործելու ազատութիւնն յարգելու եւ թէ Վարչութեան իրաւունքն ապահովելու նպատակաւ բաւական համարած էր իւր ծրագրին մէջ կրթական Խորհրդակաշին պաշտօն տալ որ ազգային կրթութեան զբաղող անհատից եւ մարմնոց ուղղութեան հսկէ : Եթէ լաւ ուշադրութիւն ընծայուի , դժուար չէ թափանցել որ այս տրամադրութիւնն իւր մէջ կը պարունակէ այն ամէն զիտողութեանց ոգին , որով թեր ու դէմ կարծիքներ յառաջ դրուեցան եւ որոց ամէնն ալ մի եւ նոյն նպատակն ունէին սակայն :

Ուստի Վիւանը կը կարծէ թէ ընդգիծախօսք պատճառ չունին չհամաձայնելու եւ թէ ժողովը կրնայ այլ եւս իւր որոշումը տալ 24 եւ 25րդ յօդուածոց մասին :

ՁԱՅՆԵՐ . — Քուէ , քուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո՛ . խնդիրն արդէն լուսարանուած եւ իւր որոշումն ընդունելու մերձակէտն հասած է : Ուստի նախ վիճարանութիւնը փակելու համար ժողովին կամքը կը խնդրեմ :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Իբրեւ Հեղինակ առաջարկի՞ վերջին խօսքն իմն է . սւտի ներեցէք որ գիտողութիւն մ'ընեմ , որ հիմնեալ է նոյն իսկ Սահմանադրութեան վրայ :

Սահմանադրութեան 45րդ յօդուածը կըսէ , « Ուսումնական խորհրդոյն պաշտօնն է՝ Հայոց ազգային դաստիարակութեան եւ կրթութեան ընդհանուր տեսչութիւնը , Իր պատուորութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեան հսկել , թէ մանչ եւ թէ աղջիկ տղայոց դաստիարակութեանը հոգ տանելու նպատակաւ հաստատուած ընկերութիւններուն խրախոյս տալ եւ ձեռնտու ըլլալ եւլն : »

Այս տրամադրութեամբ Սահմանադրութիւնն ընկերութիւնները Վարչութեան հսկո-

ղութեան ներքեւ կը դնէ , թէ եւ այդ հսկողութեան սահման մը չգտնուի եւ չճշդեր :

Ահաւասիկ իմ առաջարկութեանս հիմն Սահմանադրութեան այս տրամադրութիւնն է , եւ ոչ նոր կամ ասորինակ ինչ : Մանաւանդ որ եթէ Եւրոպական ազգաց օրինակին հետեւելով՝ վարչական գրութիւն մը կրնադուրիւք , պէտք է որ ազգային Վարչութիւնն այդ ընկերութեանց վրայ վերին հսկողութիւն մ'ի գործ դնէ : Այս հսկողութիւնն ծրագրին 24րդ յօդուածը կը սահմանէ արդէն բարոյական մասին , պէտք է ուրեմն որ նախկինն ալ հսկողութեան ներքեւ գտնուի , եւ տրամաբանական չէ այս երկու կէտերն իրարմէ բաժնելով՝ մին հսկողութեան ներքեւ դնել եւ միւսն ոչ :

Բայց ես այս հսկողութիւնն առաջարկելով՝ բնաւ չերեւակայեցի թէ պէտք է Վարչութիւնն ընկերութեանց հաշուետուարներն եւ արկղը բանայ , եւ այս կերպով գործադրէ այդ իրաւունքն , ինչպէս մեկնող եղաւ : Ես կըսեմ թէ Վարչութիւնը պէտք է տեղեկութիւն ստանայ անոնց ելմտական գործոց վրայ , եւ վերջապէս չտայ թոյլ որ ժողովրդեան նպատաներն , զոր կուտան մանկուոյն կրթութեանն եւ ուրիշ բարեգործական նպատակներու համար , փոխանակ սահմանեալ նպատակին գործածելու , իրենց օգտին գործածեն եւ զառածին ժողովրդեան վստահութեամբն եւ բարեսրտութեամբն : Եթէ փնտտելու ըլլանք , կրնանք գտնել այնպիսի ընկերութիւններ , որ ազգօգուտ նպատակներով կազմուեր , եւ նպատաներ ընդուներ են ազգէն , բայց ոչ ոք գիտցեր եւ իմացեր է թէ ի՞նչ եղած են այդ դըրամներն , ոչ ոք տեսեր է անոնց առաջադրած նպատակին գործադրութիւնն :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ես այս կէտին վրայ համաձայնութիւն մը գոյացնելու համար կառաջարկեմ Տնտեսական Խորհրդականին պաշտօնին վրայ յաւելուլ սա կէտը , « Յանուն ազգին եղած որ եւ է Հանդանակութեանց իրենց նպատակին գործածութեանն հսկել » :

ՁԱՅՆԵՐ . — Շատ աղէկ :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Կը համաձայնիմ եթէ ըսուի « Առանց բացառութեան » :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Երբ որ եւ է բան որ կայ , կը նշանակէ թէ արդէն բացառութիւն չի պիտի լինի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեղեկաբեր էֆէնտինն առաջարկած բարեփոխման մէջ որ եւ է բառն իսկ աւելորդ է , զի « Յանուն ազգին եղած հանգանակութեանց » խօսքն ընդհանուր առմամբ ամէնքը կակնարկէ : Եւ կը տեսնեմ որ այդ բարեփոխումը համամիտներ կը գտնէ , եւ զամէնքը գոհացնելու ընտրութիւն մ'ունի : Ուստի այդ բարեփոխմամբ՝ 25րդ յօդուածը քուէի պիտի դնեմ : Սակայն նախ 24րդ յօդուածին վրայ ժողովին քուէն կը խնդրեմ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ ծրագրին 24րդ յօդուածն , եւ ժողովը միաձայն ընդունելով զայն անփոփոխ՝ կը ՀԱՍՏԱՏէ :

Յետոյ՝ Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ յաջորդ 25րդ յօդուածն , եւ ժողովը Տեղեկաբեր ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ էֆէնտի առաջարկած բարեփոխման համաձայն , յաւելլով անոր մէջ « Յանուն ազգին եղած հանգանակութեանց իրենց նպատակին գործածութեանն հսկել » պարբերութիւնը , միաձայն կընդունի զայն եւ կը ՀԱՍՏԱՏէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ծրագրին առաջին գըլուխն աւարտեցաւ , որ խնդրոյն հիմնական մասը կը կազմէր , եւ կը մնայ այժմ երկրորդ գլուխը . բայց ատենը փակելու ժամը հասած է , եւ պէտք է ժողովն զադրեցնէ այլ եւս իւր աշխատութիւնն : Հետեւապէս ծրագրին քննութեան շարունակութիւնը կը մնայ յառաջիկայ նիստին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քանի որ ծրագրին առաջին գլուխն աւարտեցաւ , եւ ժողովը քուէարկեց զայն ամբողջ , կարելի չէ՞ արդ-

եօք Արքայան Պատրիարք Հօր յանձնել նոյն մասն 'ի գործադրութիւն :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ի սկզբան յայտարարեցի թէ Վարչութիւնն անկերպարան վիճակի մէջ է, եւ ստիպողութիւն տուի ծըրագրին քննութեան շարունակութեանը. սակայն համակարծիք չեմ որ ծրագրին ամբողջը չքուէարկուած՝ առաջին մասը գործադրութեան յանձնուի, վասն զի բոլոր մասերն իրարու հետ կապակցութիւն ունին, եւ գործադրութեան մէջ կրնայ շփոթութիւն ծագիլ: Զոր օրինակ, կրօնական Խորհրդականը ընտրուեցաւ, իւր պաշտաման վերաբերեալ գործոց համար՝ կրօնային Ատեանին պիտի դիմէ, բայց չի պիտի կրնայ գտնել դայն: Այսպիսի շփոթութեանց տեղի չտալու համար՝ պէտք է քիչ մ'ալ համբերենք, եւ յառաջիկայ նիստին եթէ յաջողինք աւարտելու ամբողջը՝ գործադրութեան կը դրուի այն ատեն:


ԶԱՅՆԵՐ. — Ճշմարիտ է, կը ձայնակցինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստուգիւ փափաքելի է որ ժողովին հաստատած օրինաց համեմատ

անմիջապէս Վարչութիւնը կազմուելով ազգին պիտոյից համապատասխանող գործադիր իշխանութիւն մ'ունենանք, բայց Տ. Մատթէոս Եպիսկոպոսի դիտել տուած պարագայէն զատ պատճառ մ'ալ կայ, այսօրուան համար յետաձգելու: Թրինաց վերջնական որոշումն ամբողջին վրայ քուէարկութեամբ կաւարտի, ըստ ներքին կանոնաց ժողովոյս եւ այդ քուէարկութիւնն այսօր չպիտի կրնանք կատարել: Աւստի հարկադրեալ ենք յառաջիկայ նիստին սպասելու: Յուսամ թէ իրաց այս վիճակը զրգիւն մը լինի նաեւ բացակայ երեսփոխանաց՝ յաջորդ նիստին ներկայ գտնուելու համար:

Ատեանը կը փակուի ժամը 10 ին, յառաջիկայ նիստը 15 օրէն գումարելու եւ օրակարգը նոյն պահելու որոշմամբ:

Ատեճաղպիր	Ատեճապետ
Մ. Յ. ՄԷԼԻԲԵԱՆ	Տ. ՄԷՐԵԷՄ-ԴՈՒԼԻ



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն Գ. Նիստի Ատենագրութեան :
2. Ատենական գործողութեանց վերաբերեալ գրեր :

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Երազիր վարչական կադմակերպութեան :

Գլխ 2 որոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Ա.ԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՅ ՅԱՏԿԱՑԵՍԼ

Կը ծախուի ի Գլխանատան Պատրիարքարանի Է. Ղալաբիոյ Ս. Լուսաւորից
Եկեղեցւոյ բանկայլ Է. Հայ գրավաճառաց քով